Ազգ
Azg
1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 153(4771)
ISSN: 1829-1651

# Խուճապի են մատնվել

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Դիվանագիտական պատճառությունից դուրս ոճը, որ Ադրբեջանի ԱԳՆ-ն է ընտրել՝ «պատասխանելու» Սերժ Սարգսյանին, միայն մի բան է հուշում. խաղաղություն պարտադրելու մասին ՀՀ նախագահի ասածը Բաքվում խուճապ է առաջացրել:

Եվ իրոք, ի՞նչ էր ղարաբաղյան պատերազմը, եթե ոչ՝ Ադրբեջանին խաղաղություն պարտադրելու համալիր գործողություն: Ըստ երեւույթին, ժամանակն է, որ այդ ճշմարտությունը դառնա նաեւ միջնորդների բառապաշարի մաս: Ոչ ոք մեղավոր չէ, որ Խորհրդային Միության փլուզման ժամանակաշրջանում միջազգային հանրությունը «ժամանակ չգտավ» զբաղվելու Լեռնային Ղարաբաղի խնդրով: Կամ գործադրված ջանքերն արդյունավետ չեղան, եթե ավելին չասենք՝ որ աշխարհն անտարբեր սպասում էր, թե երբ եւ ինչպես Ադրբեջանը «կլուծի իր ներքին խնդիրները»:

Կարծեմ Մինսկի խորհրդաժողովի իտալացի նախագահ Մարիո Ռաֆայելին է 1992թ. ամռանը, երբ ադրբեջանական բանակը բռնազավթել էր Լեռնային Ղարաբաղի տարածքի շուրջ կեսը եւ 60 հազար խաղաղ մարդկանց տեղահանել իրենց մշտական բնակության վայրերից, ասել, որ այդպես շարունակվելու դեպքում «Ղարաբաղի հարց այլեւս չի լինի»:

Այո, եթե հայ ժողովուրդը դարձյալ ապավինելու լիներ քաղաքակրթության եւ մարդասիրության հույսին, ապա Ադրբեջանը հաջողությամբ «կլուծեր Լեռնային Ղարաբաղի խնդիրը», եւ միջազգային որեւէ կառույց, այդ թվում՝ ՄԱԿ-ը, չէր կարող պարտադրել, որ Բաքուն հարգի «ԼՂ հայ բնակչության վերադարձի եւ ինքնորոշման իրավունքը»: Եվ հարցն ինքնին դուրս կգար միջազգային հարաբերությունների օրակարգից:

Ադրբեջանն իր գերագույն նպատակին չի կարողացել հասնել ոչ թե նրա համար, որ «մարդասիրաբար է մոտեցել հարցերին», այլ որ ԼՂ հայ մեծամասնությունը կազմակերպվել եւ դիմել է զինված ինքնապաշտպանության: Եվ այդ իրավունքն իրացնելիս, այո, նա ունեցել է Հայաստանի եւ համայն հայության օժանդակությունը: Դրանում հակաօրինական ոչինչ չկա. «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» ՄԱԿ-ի 1970թ. հռչակագրում սեւով սպիտակին գրված է, որ ինքնորոշվել ցանկացող ժողովուրդները, հանդիպելով իրենց հանդեպ բռնությունների, իրավասու են դիմել եւ ստանալ արտաքին աջակցություն: Իսկ որ ինքնորոշման իրավունքի հարցում ԼՂ հայ մեծամասնությունը Բաքվի կողմից ենթարկվել է բռնությունների եւ ռազմական ագրեսիայի՝ դա անառարկելի փաստ է:

Նման հարթությունում, ինչ խոսք, ադրբեջանական կողմը որեւէ պատճառաբանված հակափաստարկ բերելու անընդունակ է: Քանի որ այդպիսիք ուղղակի գոյություն չունեն: Դրա համար էլ գերադասում են դիմել քարոզչական հնարքների: Այս անգամ էլ Ադրբեջանի ԱԳՆ-ն չի զլացել խոսել «օկուպացիոն զորքերի դուրսբերման նախապայմանի» մասին:

*Տես էջ 8*

# Ղարաբաղյան գործընթացը «սառում» է

Հունիսի 24-ին Կազանում տեղի ունեցած եռակողմ՝ Սարգսյան-Ալիեւ-Մեդվեդեւ հանդիպման անարդյունք ելքն այդպես էլ դարձավ մի իրողություն, որ թերեւս կեզրափակի ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային ընթացքի առնչությամբ ջանքերը՝ մինչեւ, ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահող երկրներում, այնպես էլ Հայաստանում ու Ադրբեջանում չավարտվեն ընտրական ժամանակահատվածները, որոնք արդեն հեռու չեն:

Տեղեկությունները, ավելի ճիշտ՝ չճշտված ու որոշակի նպատակ հետապնդող լուրերը, թե պատրաստվում է նախագահների մակարդակով նոր հանդիպում, որոշ առումով լիցքավորում են պաղած իրավիճակը, սակայն հաստատապես համահունչ չեն իրերի տրամաբանությանը: Նմանապես իրականությունից հեռու է թվում այն տեղեկությունը, թե պատրաստվում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստի շրջանակներում, որին մասնակցելու է Հայաստանի նախագահը, նաեւ ելույթ է ունենալու:

Հաշվի առնելով Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերի հետ Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւի վերջին հանդիպումն ու քննարկումը, որն ամենայն հավանականությամբ վերաբերել է կազանյան հանդիպման արձագանքներին ու հեռանկարներին, դժվար թե երկկողմ ձեւաչափով հանդիպում ծրագրվի:

Իսկ որեւէ այլ ձեւաչափով հանդիպման, ասենք՝ Օբամա-Սարգսյան-Ալիեւ տարբերակով հավանականությունը գրեթե զրո է նույն պատճառաբանությամբ, քանի որ ԱՄՆ պետքարտուղարությունը տարբեր մակարդակներում քանիցս հայտարարել է, որ լիովին աջակցում է Մեդվեդեւի նախաձեռնություններին:

Ամեն դեպքում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին հայտարարությամբ, որ արվել է բավականին ժամանակ առաջ՝ հուլիսի 18-ին, ընդամենը ամփոփվել էր հուլիսի 11-18-ը կայացած այցելությունը Երեւան եւ Բաքու՝ հանդիպումներով ու շեշտադրությամբ, թե «հիմա քաղաքական կամք դրսեւորելու ժամանակն է»:

Ա. Հ.

# Ձերբակալվել է 2 զինծառայող

## *Դավիթ Կարապետյանի պատասխանը «Ազգ»-ի հարցին*

**- Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը օգոստոսի 30-ին սահմանային զորամաս կատարած այցի ժամանակ հայտարարել է, որ բացահայտվել է այն անձանց շրջանակը, ովքեր կարող էին բռնություն գործադրած լինել ժամկետային զինծառայող Աղասի Աբրահամյանի նկատմամբ: Ինչպիսի զարգացումներ կան այս պահի դրությամբ:**

- Աղասի Աբրահամյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործով այսօր ձերբակալվել է երկու զինծառայող, որոնցից մեկը սպա է: Դեպքի վայրում աշխատում է ՊՆ քննչական վարչության օպերատիվ խումբը՝ վարչության պետ, գեներալ-մայոր Արմեն Հարությունյանի գլխավորությամբ: Արցախում է գտնվում նաեւ ՀՀ զինվորական դատախազ Գեւորգ Կոստանյանը: Իրականացվում են օպերատիվ մեծածավալ աշխատանքներ՝ դեպքի բոլոր մանրամասները պարզելու համար: Գործը գտնվում է պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի խիստ վերահսկողության ներքո: Վաղը դեպքի վայր է մեկնելու նաեւ պաշտպանության փոխնախարար, գեներալ-մայոր Վլադիմիր Գասպարյանը: Նախաքննության շահերից եւ ձերբակալվածների ընտանիքների անդամների անվտանգությունից ելնելով առայժմ ձերբակալվածների անունները չեն հրապարակվում: Նախաքննությունը շարունակվում է, առաջիկա օրերին հնարավոր են նաեւ այլ ձերբակալություններ:

# Այսօրվանից մեկնարկում է «Ուշադրություն, երեխաներ են» անվտանգ երթեւեկության տասնօրյակը



Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ՀՀ ոստիկանությունում ընթանում են բարեփոխումների լուրջ ծրագրեր: Դրանց շարքում նաեւ տեղ են գտել վերջին շրջանում բարձրաստիճան ոստիկանների՝ Հովհաննես Թամամյանի, Մարգար Օհանյանի, Ստեփան Կարախանյանի եւ անօրինական վարորդական իրավունքներ վաճառող կին ոստիկանի ձերբակալությունները: Իհարկե, այս դեպքերը աննախադեպ են ու դարձել են առօրյա քննարկումների առիթ: Ինչեւէ, չխախտելով անմեղության կանխավարկածը, սպասենք ու հետեւենք, թե ինչ արդյունքների կհասնի նախաքննությունը:

Որքան էլ լրագրողները փորձում էին Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ **Նորիկ Սարգսյանից** որոշ տեղեկություններ քաղել նախորդ օրը իր պետ՝ Մարգար Օհանյանի ձերբակալության հետ կապված, վերջինս հրաժարվեց պատասխանել ու ասաց, որ այդ մասին ոստիկանության մամուլի բաժինը կտեղեկացնի: Այնուամենայնիվ «**Ազգի**» հարցին ի պատասխան նշեց, որ իրեն այդ գործով չեն հարցաքննել:

*Տես էջ 2*

# Ասանժի սխալը վտանգ ստեղծեց WikiLeaks-ի եւ դրա հրազեկիչների համար



**WikiLeaks կայքի հեղինակները եւ մասնավորապես Ջուլիան Ասանժը օրերս ԱՄՆ-ի պետդեպարտամենտի գաղտնի եւ կիսագաղտնի փաստաթղթերը հրապարակելիս լուրջ սխալ են թույլ տվել: Նրանք մոռացել են ֆայլերից հանել այն մարդկանց անունները, որոնք խորհրդապահական տեղեկություններ էին տրամադրել կայքին: Հիմա վտանգ է սպառնում դիվանագիտական շրջանակներին մոտիկ կանգնած բազմաթիվ քաղաքական գործիչների, լրագրողների եւ այլ անձանց, հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը:**

**Անցյալ շաբաթ Ասանժը հայտարարել էր կայքում ԱՄՆ պետդեպարտամենտի արխիվների 100 հազար անտիպ փաստաթղթերի ու նամակների հրապարակման մասին: Չար լեզուներն ասում են, թե Ասանժն այդ քայլին դիմեց աշխարհի լրատվամիջոցների ուշադրությունը վերստին WikiLeaks-ի սենսացիոն նյութերի վրա բեւեռելու նպատակով, քանզի վերջերս ԶԼՄ-ներն ավելի շատ լուսաբանում էին նրա անձնական կյանքը, դատավարությունը եւ հակակառավարական գործունեությունը:**

**Օգոստոսի լույս 31-ի գիշերը համակարգչահենային գրոհի հետեւանքով WikiLeaks կայքը ժամանակավորապես շրջափակվեց, բայց հետո վերստին մատչելի դարձավ: Կայքի սեփականատերերի կարծիքով՝ կիբեռգրոհի հեղինակները թերեւս կառավարական ինչ-ինչ կառույցներ են:**

Պ. Ք.

# Գալուստ Սահակյանը «դաքախանից» գիտի բոլորին



Անդրադառնալով «Վիկիլիքսի» գաղտնազերծված այն տեղեկությանը, թե Հայաստանի քաղաքական դաշտի եւ պետության որոշ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, օգուտներ են ստացել թմրանյութերի առեւտրից, եւ պատասխանելով այն հարցին, թե ինչպես է վերաբերվում հատկապես վերջին տեղեկությանը, ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է, թե ինքը դրան չի հավատում: Իսկ ընդհանրապես, ըստ Գալուստ Սահակյանի՝ «Վիկիլիքսի» հրապարակած տեղեկություններին լուրջ չպետք է վերաբերվել: Այդ տեղեկությունները լարված կերպով ամբողջ աշխարհը արդարացումների մեջ են դնում, բայց դա քայլ է, որ փորձում են այս կամ այն պետությանը խաղերի մեջ գցել: Այդ ամենը ոչ թե իրական ինչ որ գործոն է, որը դաշտը առաջնորդում է, այլ PR տեխնոլոգիա է, որով այս ֆինանսատնտեսական ճգնաժամի փուլում հիմնական խնդիրներից շեղում է ուշադրությունը: «Կարծում եմ, որ եթե ինչ որ բան ենք ուզում պարզել, ապա կոնկրետ մեզ վերաբերող հարցում ցանկացած լրագրող կարող է հարցադրումներ անել այն անձերին, ովքեր նշված են այդ հրապարակումներում, եւ ստանալ հստակ, կոնկրետ պատասխաններ», ասել է Գ. Սահակյանը, թեեւ նրա գործընկեր **Ռաֆիկ Պետրոսյանը** կայքերից մեկին ասել էր, որ հասարակական հնչեղություն ունեցող այդպիսի հարցին դատախազությունը պետք է անդրադառնա:

Մի հետաքրքրական պատասխան էլ է հնչեցրել Սահակյանը մամուլի այն հրապարակման առիթով, թե իբր ՀԱԿ-իշխանություն երկխոսությունը կանգ է առել ԱՄՆ-ի հրահանգով. այդպիսի լուրերին հավատալը նշանակում է հավատալ, որ ԱՄՆ-ը վախեցել է ՀԱԿ-ից ու ինչ որ բան է անում, ինչը Գ. Սահակյանը աբսուրդ է համարել: Իսկ ՀԱԿ-ի ակտիվիստների եւ մասնավորապես՝ Տիգրան Առաքելյանի հետ կապված միջադեպը, ըստ ՀՀԿ փոխնախագահի, ՀԱԿ-ի համար առիթ էր երկխոսության ընթացքը կանգնեցնելու, քանի որ իշխանական կողմի՝ արտահերթ ընտրություններ անցկացնելու դեմ հակափաստարկները վերլուծելու եւ դրանց սխալները գտնելու համար ժամանակ է պետք: Գ. Սահակյանն այս անգամ էլ չի խուսափել յուրահատուկ մտքերից, ինչպես այն, որ իր համար տհաճ է ՀԱԿ-ի հետ երկխոսության նստելը, քանի որ ՀԱԿ-ի մարդկանց ճանաչում է՝ «դաքախանից գիտի բոլորին», բայց քանի որ հասարակության մեջ խնդիրներ կան, այդ պատճառով բաց լինելու պարտավորություն ունի իշխանությունը:

Ս. Խ.

## Ընթացիկ

# Երեւանի դեմքը փոխվել է, սեյսմիկ վտանգը՝ ավելացել

Մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայանի գլխավերեւում կառուցվելիք 7-հարկանի 4-աստղանի հյուրանոցը պետք է կառուցվի 5853.25 քմ տարածքի վրա: Թեպետ քաղաքապետ Կարեն Կարապետյանը, մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը հավաստիացնում են, որ տարածքը չի ներառելու մետրոյի պատվանդաններն ու աստիճանները, սակայն ճարտարապետներն անհնար են համարում ներկայացված նախագծով փոքր տարածքում իսկական շինություն կառուցելը: Ոչ միայն ճարտարապետները, այլեւ բնապահպաններն ու խնդրով հետաքրքրվող քաղաքացիները համոզված են՝ թղթի վրայի գրածը կմոռանան ու պետական մրցանակի արժանացած բակն ու շատրվանն էլ կկառուցապատեն:

Ճարտարապետների բողոքին ու անհանգստությանը երեկ միացել են նաեւ բնապահպաններն ու հասարակական մի քանի տասնյակ կազմակերպություններ եւ կառավարությունից պահանջում են չեղյալ հայտարարել որոշումն ու հասարակական, մասնագիտական լսումներ անցկացնել:

«Երեւանի կենտրոնում այսօր գործում է 17 հյուրանոց: 4 հյուրանոց էլ նախատեսվում է կառուցել: Ո՞րն է դրա նպատակահարմարությունը», «Արմատում» զարմանում է «Հանուն մարդկային կայուն զարգացման» հասարակական կազմակերպության նախագահ **Կարինե Դանիելյանը**: Բնապահպանը համոզված է՝ Նարեկ Սարգսյանի գաղափարախոսությունը կործանարար է մայրաքաղաքի համար: Շինարարական բոլոր նախագծերը, որտեղ առկա է Սարգսյանի ստորագրությունը, ոչ միայն պատճառ են դարձել, որ Երեւանը կորցնի իր արտաքին տեսքը, այլեւ զգալի վնաս են հասցրել բնապահպանությանը, կոմունիկացիային, օդի մաքրությանը: Մի շարք հասարակական կազմակերպություններ Երեւանի ներկա ու նախկին քաղաքապետներին առաջարկել են քաղաքապետարանում էկոլոգիական խորհուրդ ստեղծել, սակայն քաղաքապետարանից մերժել են: «Խորհրդի գոյությունը մերժեցին, մինչդեռ մենք պատրաստ էինք անվճար խորհուրդներ տալ», ասում է Դանիելյանը: Նա քաղաքապետի մի շարք ձեռնարկներ համարում է հաջողված, սակայն քաղաքաշինության քաղաքականությունը կապված է փողի, շահի հետ եւ դրա համար էլ չի փոխվում: Բնապահպանը հիշեցնում է, որ մայրաքաղաքի նախկին գլխավոր ճարտարապետ Հասրաթյանը հրաժարականի դիմում ներկայացրեց, որովհետեւ դեմ էր քաղաքաշինական նման շահադիտական նորմերին:

«Քաղաքաշինությունը փոխել է Երեւանի դեմքը. այն դարձել է ոչ երեւանցու համար»: Սա էլ ճարտարապետ **Գագիկ Սուխուդյանի** տեսակետն է: Նա առաջարկում է խնդիրը հիմքից դիտարկել: «Մենք մազ ենք ներկում, բայց մեր ներքին օրգանները հիվանդ են, մենք շենք ենք ներկում, բայց մեր քաղաքաշինությունը սխալ է: Մեր հանրապետությունը կոչվում է Հայաստանի Հանրապետություն: Չի կոչվում Հայաստանի էլիտար հանրապետություն: Երեւանն ունի լուրջ քաղաքաշինական պրոբլեմներ, որոնք լուծելուց հետո կարող են նաեւ այդ կոսմետիկ փոփոխություններն էլ անել»:

Հրապարակում հյուրանոցի կառուցման հետեւանքով փոքր կենտրոնին կսպասվի խտացման վտանգ: Դա հավելյալ ծանրաբեռնելու է երթեւեկությունը: «Մեկ կանաչ տարածքում են կառուցում հյուրանոց, մեկ հրապարակում՝ սխալ, սխալի հետեւից», ասում է ճարտարապետը:

«Ռաժոկով մտցրած շենքեր են: Եթե մի փոքր տարածք կա շենքերի բակում, ուրեմն այդտեղ անպայման շենք են ուզում կանգնեցնել», շարունակում է բնապահպանը: Նա հիշեցնում, որ ներկա դրությամբ փոքր կենտրոնի երեք բակում՝ Կողբացի-Պուշկին, Նալբանդյան եւ Աբովյան-Սայաթ Նովա, բնակիչները պայքարում են կառուցապատողների դեմ, ովքեր կանաչ տարածքների հաշվին, բնակելի շենքերին կպած նոր «էլիտար» շենք են կառուցում:

Կարինե Դանիելյանը հավելում է, որ նման քաղաքականության հետեւանքով սեյսմիկ ռիսկերն են մեծանում, քաղաքի պատմամշակութային տեսքն է աղավաղվում, մարդկանց առողջությունն է վնասվում: «Քաղաքում արդեն ասեղ գցելու տեղ չկա, կենտրոնում հյուրանոց կառուցելու փոխարեն թող արվարձաններում կառուցեն: Նոր հյուրանոցի կառուցումից խցանումներ են առաջանալու, որտե՞ղ է կառուցվելու հյուրանոցի ավտոկայանատեղին: Մետրոյի խորությունն այնքան էլ շատ չէ՝ 17 մետր, եւ շենքը անընդհատ վիբրացիայի տակ է լինելու»: Բնապահպանի գնահատմամբ՝ նորակառույց անմարդաբնակ շենքերը դառնում են ազգային անվտանգության խնդիր:

«Ո՞ւմ համար են նախատեսում այդքան շենքերը: Իրանում հեռուստագովազդով հրավիրում են գալ եւ գնել Երեւանի կենտրոնի բնակարանները: Դա արդեն ազգային անվտանգության խնդիր է: Ճարտարապետական նախագծերը մշակելիս ոչ փողոցների ծանրաբեռնվածությունն են հաշվարկում, ոչ կոմունիկացիաները»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Իսկ անվտա՞նգ են մեր անցումները

Այսօր մեկնարկում է ուսումնական տարին, եւ ճանապարհային ոստիկանությունը իր ուժերը կենտրոնացրել է, որպեսզի անվտանգ երթեւեկության 10-օրյակում որեւէ դժբախտ պատահար չգրանցվի: Այսուհանդերձ, կարծում ենք դպրոցականների երթեւեկության անվտանգությունը կարիք ունի համալիր մոտեցումների: Օրինակ, տարիներ շարունակ Նոր Նորքի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ զանգվածների խաչմերուկը, որից հետո ճանապարհը դառնում է միակողմանի, դարձել է շատ վտանգավոր հետիոտնի համար: Տրանսպորտի կանգառից 15-20 մետր հետո միակ գետնուղին պարզապես փորձանքի բուն է հատկապես դիմացի մայթում գտնվող դպրոց, մանկապարտեզ, մանկական պոլիկլինիկա գնացողների համար: Արդեն վրաերթի մի քանի դեպք գրանցվել է հենց այդ վտանգավոր անցումում, չնայած ճանապարհային ոստիկանությունը ժամանակ առ ժամանակ թարմացնում է դեպի գետնուղի տանող գծանշումները, համապատասխան նախազգուշացնող նշաններ տեղադրում: Ոչ մի կերպ չի լուծվում այդ անցումի անվտանգության հարցը: Միակ ելքը այն է, որ չորս զանգվածները իրար կապող այդ միակ խաչմերուկից մինչեւ գետնուղի քաղաքապետարանը արհեստական խոչընդոտ (թումբ) անի՝ դանդաղեցնելու համար մեքենաների արագությունը եւ դպրոցականները հանգիստ կարողանան դիմացի մայթ անցնել:

Հուսանք, որ այս առաջարկը քաղաքապետարանի համապատասխան վարչությունը նկատի կառնի ու արագ կարգով կարձագանքի:

Մ. Մ.

# Դավթաշենի կամրջի «բախտը»

## *Կամ ինչպես անել, որ նորոգումը միշտ նորոգման կարիք ունենա*

Մի որոշ ժամանակ առաջ Դավթաշենի կամրջով երթեւեկությունն առավելապես խոչընդոտների հաղթահարման վազք էր հիշեցնում, ընդ որում, ուզածդ մեքենայի բոլոր աշխատող ու չաշխատող դետալները մետաղական երաժշտությամբ ու վերուվար անող թափքով էին արձագանքում ճանապարհի խորդուբորդություններին, կամրջի դուրս ցցված մետաղական մասերին ու մի քանի տասնյակ սանտիմետր խորացող փոսերին, ու այստեղ-այնտեղ դարանում էին կամրջով հաճախ չերթեւեկող վարորդներին՝ նրանց ճանապարհը կիսատ թողնելու հաստատ հեռանկարով:

Վերջին մեկ-երկու ամիսներին Խորհրդային Հայաստանից կիսատ մնացած մի կառույց հանդիսացող Դավթաշենի կամուրջը նորոգում էին, ավելի շուտ՝ նորոգում էին կամրջի ասֆալտածածկույթը: Պարզվում է, այսօրվանից ամբողջությամբ երթեւեկելի կդառնա Դավթաշենի կամուրջը: Ըստ քաղաքապետարանի, հիմնանորոգման աշխատանքների արդյունքում ամբողջությամբ փոխվել է Դավթաշենի կամրջի ասֆալտբետոնյա ծածկույթը, փոխվել է ջրահեռացման համակարգը:

Այն, որ ոչ այնքան հին, ընդամենը գրեթե 10-ամյա շահագործում ունեցող կամուրջը նորոգման կարիք ուներ, կույրն էլ կտեսներ: Այսինքն՝ ժամանակային առումով առավել քան պահանջված միջոցառում էր կամրջի ասֆալտբետոնյա ծածկույթի նորոգումը: 496 մետր երկարությամբ ու 32 մետր լայնությամբ մետաղյա այս կամրջի նորոգման մասին դեռ հունիսին Երեւանի ավագանին իր նիստում քննարկում էր վերանորոգման հարցը, պաշտոնապես էլ պարզաբանվել էր, որ կամրջի հետազոտման ու վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվել էին դեռեւս 2009-ին:

Ըստ այդմ, կամուրջը վթարային չէր գնահատվել, բայց նշվել էր ընթացիկ վերանորոգման անհրաժեշտության մասին, քանի որ թեեւ կամուրջը շահագործման է հանձնվել մոտ տասը տարի առաջ, դրա մետաղական կոնստրուկցիաները տեղադրվել էին ավելի քան 20 տարի առաջ, ուստի դրանք թարմացման կարիք ունեին: Վերանորոգմամբ նախատեսված էր նաեւ կարգավորել կամրջի էստակադային հատվածի եւ մետաղական թռիչքների ջրահեռացման համակարգը, քանի որ կամրջի արտաքին շերտերում կային կոռոզիայի երեւույթներ: Նախատեսված էր նաեւ նորոգել կամրջի երթեւեկելի մասի ասֆալտածածկույթը եւ թարմացնել հենարանների բետոնե կոնստրուկցիաները:

Այն ժամանակ Երեւանի քաղաքապետարանը նաեւ պարզաբանել էր, թե նախատեսվող վերանորոգումը սովորական ծրագրային աշխատանք է, որպիսիք իրականացվում են ժամանակի ընթացքում բոլոր կառույցների համար: Այսօր արդեն իսկ կարելի է փաստել, որ մի քանի տասնյակ օրում իրականացված նորոգումը, թեեւ զգալի տարբերվում է նախկին վիճակից, սակայն առանձնակի բարվոք չի կարող որակվել: Իսկ եթե հաշվի առնենք, որ, ընդհանրական կիրառության մեջ օգտագործվող բնութագրմամբ, Դավթաշենի կամուրջը բարակ մետաղյա է, այսինքն՝ ցուրտ եղանակին առնվազն մերկասառույցն այստեղ ապահովված է, իսկ մեզանում էլ դրա դեմ պայքարում են աղ ու ավազով, հաստատապես մի որոշ ժամանակ անց քիչ թե շատ երթեւեկելի դարձած կամուրջը ձեռք կբերի նախկին տեսքը: Այս ամենին եթե գումարենք, որ նորոգված կամրջի ասֆալտածածկույթը դաշնամուրի սեւ ու սպիտակ ստեղների նման վայրիվերումներ արդեն իսկ ունի, ակնհայտ է, որ ջուրն են լցվելու ինչպես արված աշխատանքը, այնպես էլ սուղ միջոցները:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# Այսօրվանից մեկնարկում է «Ուշադրություն երեխաներ են» անվտանգ երթեւեկության տասնօրյակը

*1-ին էջից*

Գնդապետը, անդրադառնալով ասուլիսի թեմային, նախ շնորհավորեց բոլոր մանկավարժներին եւ դպրոցականներին նոր ուսումնական տարվա առիթով ու մաղթեց անվտանգ երթեւեկություն: Արդեն ավանդական դարձած ամեն ուսումնական տարվա սկզբին ճանապարհային ոստիկանությունը մշակում է անվտանգ երթեւեկության 10-օրյակի համար հատուկ աշխատանքային գրաֆիկ: Բոլոր դպրոցամերձ հատվածներում թարմացվել են անցումային գծանշումները:

Դպրոցներում դասաժամերի փոփոխությունները նկատի է առնվել ու մշակվել է հատուկ ծրագիր՝ առավոտյան ժ. 8-10 բեռնատար մեքենաների (բացի հատուկ ուղեգիր ունեցողներից) մուտքը արգելվում է փողոցներում: Հին վարորդական իրավունքի վկայականները ուժի մեջ են մինչեւ դեկտեմբերի 31-ը եւ ենթակա են փոխման, ասաց պրն Սարգսյանը:

2011-ի 7 ամիսների ընթացքում գրանցվել է 1135 ճտպ, որի հետեւանքով զոհվել են 150, մարմնական վնասվածք են ստացել 1697 մարդ:



Իսկ այսօրվանից, վաղ առավոտից մինչեւ դասերի ավարտը բոլոր դպրոցների, բուհերի շրջակայքում հերթապահություն կսահմանեն ոստիկանները, որպեսզի 10-օրյակը առանց ցնցումների ու դժբախտ դեպքերի անցնի, ասաց գնդապետը: Վերջինս հորդորեց բոլոր ծնողներին, մանկավարժներին՝ դպրոցականներին ուսուցանել ճանապարհային երթեւեկության կանոնները: «**Ազգի**» հարցին պատասխանելով գնդապետն ասաց, որ շուտով բոլոր դպրոցներում պարտադիր կմտցվեն 10-ժամյա ճանապարհային երթեւեկության կանոններին առնչվող հատուկ դասաժամեր: «Ինչքան էլ մենք նախապատրաստվում ենք անվտանգ երթեւեկության 10-օրյակին,- ասաց Նորիկ Սարգսյանը,- այնուամենայնիվ, տարիների փորձը ցույց է տվել, որ անկանխատեսելի են դառնում երեխաների մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային պատահարները»:

Նախորդ տարի 10-օրյակի ընթացքում գրանցվել է 6 ճտ. պատահար, որոնց հետեւանքով զոհվել է 1 եւ վիրավորվել 6 երեխա: Այդ ցուցանիշը աճել է նախորդ տարվա համեմատ. զոհերի թիվը՝ 14-ով, վիրավորներինը՝ 357-ով, պատահարներինը՝ 143-ով: Իսկ թե ինչով է պայմանավորված թվերի աճը՝ «**Ազգի**» հարցին Նորիկ Սարգսյանը բացատրեց. «Մի կողմից ԱՊՊԱ համակարգի ներդրումն է դեր խաղացել, մյուս կողմից՝ ներմուծվող տրանսպորտային միջոցների քանակը շատ ինտենսիվ կարգով աճում է: Միայն այս տարվա 7 ամիսների ընթացքում ՀՀ է ներմուծվել 15.428 տրանսպորտային միջոց: Երկու տարին միասին վերցրած շուրջ 35.000 մեքենա է ներմուծվել միայն 7 ամիսների ընթացքում, որը 15 տոկոսով աճել է»: Մինչեւ տարեվերջ մայրուղիներում կտեղադրվեն ռադարներ, տեսախցիկներ, որոնք կարձանագրեն բոլոր խախտումները: Երեւանում ամեն օր ճանապարհային ոստիկանների 100 կարգախումբ՝ 200 ոստիկանով իրականացնում են հսկողություն: Իսկ մինչեւ տարեվերջ նրանք նույնպես կկրեն նոր համազգեստ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անդրադարձ

# Օգոստոսի 31-ը Զորավար Անդրանիկի հավերժության օրն էր

*«Երբ իրիկունը գլուխներդ բարձին դնեք ու քնանաք, մի քիչ մտածեք ձեր ազգի մասին»*

Եվ որքա՞ն մտածեց հայազգի անզուգական հերոսը իր ազգի մասին, սկսած մանկական տարիից, հայրենի ծննդավայր Շապին Գարահիսարում վրիժառության խմբակներ ստեղծելով եւ անձնապես թուրք ոստիկանի ահաբեկելով, մինչեւ իր երկրային կյանքի ավարտը:

Այսպես, երբ Սասունում ինքնապաշտպանության խմբեր էին կազմավորվում նշանավոր ազգային գործիչ Միհրան Տամասյանի ղեկավարությամբ, Զորավարը՝ դեռ անփորձ զինավարժ, 1890 թվականների սկզբներին հասավ Սասուն եւ անդամագրվեց Աղբյուր Սերոբի ֆիդայախմբին, մարտնչեց հանուն ազգի արժանապատվության:

Կամ երբ 1901 թվականին թուրքական հալածանքները եւ կեղեքումները հասել էին անտանելի չափերի, Հերոսը այդ վիճակը մինչեւ արտասահմանցուն հասցնելու համար 1901 թ. նոյեմբերի 2-ին կամովին պաշարվեց Մշո Առաքելոց վանքում, 25 օր դիմակայեց թուրքական 6000-անոց բանակի 5 հարձակումները, եւ այդ մասին Պոլսում գտնվող իրենց երկրների դեսպանատների միջոցով տեղեկացան եվրոպական բոլոր երկրների եւ Ամերիկայի ղեկավարները:

Մի՞թե Հերոսը հենց այնպես վաշտ հավաքեց եւ մասնակցեց Բալկանյան պատերազմին. ո՛չ, նա լրիվ գիտակցում էր, որ եթե Թուրքիան գրավի Բուլղարիայի հարավը, ապա ի՞նչ կլիներ այդտեղ արդեն բնավորված տասնյակհազարավոր հայերի ճակատագիրը: Հենց այս պատերազմում Հերոսի անվեհեր ռազմավարության շնորհիվ գերեվարվեց թուրքական բանակի շտաբը չորս փաշաներով՝ հռչակավոր Յավեր փաշայի հետ, եւ 11-հազարանոց բանակ կապիտուլյացիայի ենթարկվեց (15 նոյեմբերի, 1912 թ., Մեհրամլեի ճակատամարտ):



Հարսանեկան խմբանկար. Փարիզ, 1922 թ. մարտի 15

Ինչ կլիներ Վանի գավառի հայության վիճակը, եթե Հերոսը հակառակ ճակատի հրամանատարի հրամանի, այն է՝ նահանջել, Դիլմանի լեռնանցքում չջախջախեր բազմահազար թուրքական բանակին (ապրիլի 17, 1915 թ.):

1918 թ. փետրվարին, երբ դավաճանաբար հանձնվեցին Էրզրումը, Կարսը շրջանի տասնյակհազարավոր հայեր ապավինեցին Անդրանիկի եւ իր ընկերների ջոկատներին եւ դժվարությամբ, բայց եւ այնպես փրկվեցին ստույգ մահից:

Երբ Հերոսը ստիպված 1918 թ. մայիսին ուղեւորվեց Դիլիջան-Սեւան-Բռնակոթ-Ջուլֆա ճանապարհով դեպի Հայաստան՝ Երգիր, նպատակ ուներ միանալու դաշնակից անգլո-ֆրանսիական զորքին եւ համոզել ազատագրել Արեւմտահայաստանը:

Ապա Զանգեզուրի պաշտպանության կազմակերպումը (1918 թ. օգոստոս-1919 թ. մայիս):

Եթե Անդրանիկը չպահեր Զանգեզուրը, Մեծն Նժդեհին պահելու բան չէր մնա...

Հայաստանից հարկադրյալ հեռանալով՝ Զորավարը միշտ հոգով իր ժողովրդի հետ էր. օգնեց նորաստեղծ հայրենիքին ինչով կարող էր:

Իմանալով, որ իր շատ սիրելի ընկերը՝ Հովհաննես Թումանյանը, հիվանդ է, եւ բուժման համար շատ փող է պետք, հեռավոր Ամերիկայից Զորավարը փող է ուղարկում, այն էլ բանկից տոկոսով պարտք վերցնելով:

Հուսով ենք, որ այս օրերին յուրաքանչյուր կարող հայ մարդ պետք է այցելի Եռաբլուր եւ մեկ մոմ վառի Հերոսի հիշատակի համար:

Հարկ եմ համարում նշել, որ նորանկախ Հայաստանում հերոսի կյանքն ու գործունեությունը ԶԼՄ-ների կողմից արժանիորեն չի լուսաբանվում՝ բաց թողնելով սերունդներին անդրանիկյան ոգով դաստիարակելու հիանալի հնարավորությունը:

Զորավարին նվիրված միակ՝ առաջին եւ վերջին հոբելյանական հանդեսը կայացել է մեր ջանքերի շնորհիվ 1990-ին՝ Անդրանիկի 125-ամյակին:

**ՆՈՐԱՅՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ**
**«Զորավար Անդրանիկ» միության նախագահ**

# Orange-ը փոխում է «անսահմանափակի» պատկերացումները

*Այսուհետեւ կարելի է անվերջ խոսել եւ շփվել սոցիալական ցանցերում*

**Երեւան, 31 օգոստոսի, 2011թ.:** Orange-ն այսօր ներկայացրեց նոր «անսահմանափակ» առաջարկներ ձայնային ծառայություններից եւ բջջային ինտերնետով սոցիալական ցանցերից օգտվողների համար՝ այսպիսով նոր էջ բացելով շուկայում ձայնային ծառայությունների պատմության մեջ:

«Մենք ունենք բաժանորդներ, ովքեր սիրում են խոսել հեռախոսով ու չեն սիրում հաշվել րոպեները, եւ ունենք բաժանորդներ, որոնց համար ամենակարեւորը մատչելի շփումն է սոցիալական ցանցերում: Այսօր մենք լուծումներ ենք տալիս եւ առաջինների, եւ երկրորդների համար, եւ առաջարկում ենք ընտրել երկու «անսահմանափակ» հնարավորություններից մեկը. խոսել Orange-ի բաժանորդների հետ կամ շփվել սոցիալական ցանցերում»,- ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Պարզապես հավաքելով *129#՝Orange-ի կանխավճարային ծառայության բաժանորդները կարող են ընտրել. վճարել 100 դրամ եւ անսահմանափակ խոսել Orange-ի բաժանորդների հետ 1 օր կամ վճարել 500 դրամ եւ ունենալ նույն հնարավորությունը 7 օր շարունակ: Ընտրելով «անսահմանափակ սոցիալական ցանցեր» տարբերակը՝ բաժանորդները կարող են





1 կամ 7 օր շարունակ առանց սահմանափակումների այցելել Facebook, LinkedIn, Hayland, Odnoklassniki, Vkontakte եւ Twitter սոցիալական ցանցեր: Առաջարկից կարող են օգտվել Orange Խոսենքի բոլոր սակագնային պլանների բաժանորդները, բացառությամբ «Պարզ» սակագնային պլանի: 1 կամ 7 օրվա ժամկետը լրանալուց հետո ծառայությունն ամեն անգամ ավտոմատ կերպով կվերաակտիվանա: Ավտոմատ վերաակտիվացումը կարելի է նաեւ դադարեցնել ցանկացած պահի՝ կրկին հավաքելով *129#:

«Սա այն լավագույն նվերն է, որ բջջային օպերատորը կարող է անել իր բաժանորդներին ուսումնական տարվա նախաշեմին. Orange-ը բացառիկ հնարավորություն է տալիս իր բաժանորդներին սեպտեմբեր ամսվա ընթացքում ծառայությունն առաջին անգամ ակտիվացնել անվճար», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն **Արամ Մկրտչյանը**:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

# Հունվար-օգոստոսի գնաճը՝ 8,8 տոկոս

*Սակայն հուլիսի համեմատ օգոստոսին գրանցվել է 0,6 տոկոս գնանկում*

**2011-ի հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գնաճը կազմել է 8,8 տոկոս, իսկ 2011-ի օգոստոսին 2010-ի օգոստոսի նկատմամբ՝ 4,8 տոկոս: Այս ցուցանիշներն է արձանագրել Ազգային վիճակագրական ծառայությունը:**

**Ըստ վիճծառայության, հուլիսի համեմատ օգոստոսին գրանցվել է 0,6 տոկոս գնանկում, պարենային ապրանքների գները նվազել են 1 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գները՝ 0,1 տոկոսով, ծառայությունների ոլորտում գրանցվել է 0,1 տոկոս գնաճ:**

**Սակայն անցյալ տարվա հունվար-օգոստոսի համեմատ պարենային ապրանքների գները աճել են 14,5 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գները՝ 3,1 տոկոսով, ծառայություններինը՝ 4,3 տոկոսով:**

**Բնականաբար, առավել հետաքրքրական են պարենային ապրանքների գների փոփոխություններն այս տարվա օգոստոսին՝ հուլիսի եւ 2010-ի օգոստոսի համեմատ: Այսպես, բանջարեղենի գներն ընդհանուր առմամբ, նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազել են 25,7 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի համեմատ՝ 4,9 տոկոսով: Մրգերի գներն 2010-ի օգոստոսի համեմատ 2011-ի օգոստոսին նվազել են 5,5 տոկոսով, այս տարվա հուլիսի համեմատ՝ 13,6 տոկոսով: Հացամթերքի գները 2010-ի օգոստոսին 2011-ի օգոստոսի համեմատ աճել են 8,4 տոկոսով, 2011-ի հուլիսին՝ նվազել են 1,5 տոկոսով: Կաթնամթերքի գները 2010-ի օգոստոսին 2011-ի օգոստոսի համեմատ նվազել են 21,8 տոկոսով, 2011-ի հուլիսին՝ արձանագրվել է 1,5 տոկոս աճ:**

**Գների ինդեքսը վիճակագրական ծառայությունը որոշում է հիմք ընդունելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Աշտարակ կաթը» ներկայացնում է գների բարձրացման իր բացատրությունները

**Մեր թերթի նախորդ համարներից մեկում տեղեկացրել էինք, որ «Աշտարակ կաթ» ընկերության արտադրանքի որոշ տեսականու թանկացման կապակցությամբ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը բացատրություններ էր պահանջել ընկերությունից, քանի որ վերջինս այս շուկայում գերիշխող դիրք ունեցողներից է:**

**Երեկ «Աշտարակ կաթից» մեզ տրամադրած մամլո հաղորդագրության համաձայն, ընկերությունն իր որոշ ապրանքների գների թանկացումը բացատրում է հումքի գների մինչեւ 50 տոկոս թանկացմամբ: Ըստ այդ հաղորդագրության, «Աշտարակ կաթը», 2010-ի նույն ժամանակահատվածի համեմատ, 2011-ին ավելի քան 6000 գյուղացիական տնտեսություններից կաթը մթերել է 35 տոկոսով ավելի բարձր գներով: Միաժամանակ, տեղեկացվում է, որ 10-50 տոկոսով բարձրացել են ներկրվող հումքի, փաթեթավորման նյութերի եւ վառելիքի գները: Ներկայացնելով այս պարզաբանումները՝ «Աշտարակ կաթը» հայտնել է նաեւ, որ ինքնարժեքի կտրուկ բարձրացումից գների անխուսափելի բարձրացման հետեւանքները մեղմելու համար գների վերանայումն իրականացրել է որոշակի փուլերով:**

**Թե՞ որքանով են հիմնավոր «Աշտարակ կաթի» բացատրությունները, պետք է փորձի պատասխանել տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: Պարզապես հիշեցնենք, որ պանրի գների չհիմնավորված բարձրացման համար հանձնաժողովն այդպես էլ այս ընկերությանը օրենքով նախատեսված պատասխանատվության չենթարկեց:**

**Ա. Մ.**

# «ՆՈՒԽՌ» ծրագրին աջակցում է ՀԲԸՄ-ն

**ՀԲԸՄ-ի նյույորքյան մամուլի գրասենյակից ստացված հաղորդագրության համաձայն՝ «Ֆրութֆուլ Արմենիա հիմնադրամի» եւ ՀԲԸՄ-ի համատեղ ջանքերով մեկնարկած «Մեկ համակարգիչ յուրաքանչյուր երեխայի» (ՄՀՅԵ) կրթական նոր ծրագիրը՝ մշակված ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Տեխնոլոգիաների ինստիտուտում, շատ հոգեհարազատ է ՀԲԸՄ-ի առաքելությանը, որը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կրթական ծրագրերը:**

**«Մենք ամեն ջանք գործադրելու ենք ծրագրի հաջողության համար: Դրանով մենք զարգացնելու ենք ամենաարժեքավոր՝ մարդկային գործոնը, հնարավորություն տալով երեխաներին վաղ հասակից սովորելու տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով», նշել է ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յագուբյանը: «Մենք դասագրքերով ենք սովորել, նրանք համակարգիչներով են սովորելու», ավելացրել է «Ֆրութֆուլ Արմենիա հիմնադրամի» գործադիր տնօրեն Աննա Քրիստինա Շիրինյանը: Ծրագրի մասին «Ազգ»-ը գրել էր օգոստոսի 17-ի համարում:**

**Հ. Ծ.**

# ԱՄՆ դեսպանատան միջոցառումների շարք Արմավիրի մարզում

**Ինչպես տեղեկացանք ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մամուլի բաժնից, սեպտեմբերի 2-ին Արմավիրի մարզի Թալին քաղաքում տեղի կունենա ԱՄՆ դեսպանատան Ռազմական համագործակցության գրասենյակի, ԱՄՆ զինված ուժերի եվրոպական հրամանատարության քաղաքացիական դեպարտամենտի եւ ԱՄՆ ցամաքային զորքերի ինժեներական կորպուսի վերանորոգված Թալինի պոլիկլինիկայի բացման արարողությունը: Միջոցառմանը կմասնակցեն Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, ԱՄՆ դեսպանատան Ռազմական համագործակցության գրասենյակի ներկայացուցիչները, եվրոպական հրամանատարության ներկայացուցիչները եւ մարզային պաշտոնյաներ: Այս միջոցառումից անմիջապես հետո Ներքին Սասնաշեն գյուղում տեղի կունենա 1958թ. սեպտեմբերի 2-ին ամերիկյան C-130 ռազմական օդանավի վթարի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումը, որին կմասնակցեն ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար Բրյուս Դոնահյուն, ԱՄՆ զինված ուժերի եվրոպական հրամանատարության բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաեւ ՀՀ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ: Այնուհետեւ հյուրերը մարզի ղեկավարի ուղեկցությամբ կմասնակցեն Սասնաշենի մանկապարտեզի շենքի բացմանը:**

**1958 թվից մինչ այսօր հետաքրքրական է, թե ամերիկյան C-130 ռազմական օդանավը ինչո՞ւ էր հայտնվել Հայաստանի օդային տարածքում ու վթարի ենթարկվել:**

**Մ. Մ.**

# (ԱՆ)ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

# Տաշտուն գյուղի ջրաղացը

Հայաստանում ջրաղացները տարածված են եղել դեռեւս ուրարտական ժամանակներից, որի մասին վկայում է Վարագա լեռան (Վան քաղաքից հարավ-արեւելք) վրա գտնված, 92 սանտիմետր տրամագծով ջրաղացքարը:

Տաշտուն գյուղի ջրաղացն ավելի քան 100 տարվա պատմություն ունի: Այն ներկայումս շահագործվում է: Գյուղի բնակիչները ցորենը աղում են ջրաղացում, որը գտնվում է գյուղապետարանի տրամադրության տակ: Ջրաղացն աշխատում է Տաշտուն գետից առբերված ջրով: Այսօր էլ Հայաստանում աշխատում է Աշտարակ քաղաքի Քասախի կամրջի մոտ գտնվող ջրաղացը, որը կառուցվել է մոտ 400 տարի առաջ:

Ներկայումս աշխարհում գոյություն ունեցող ջրաղացների քանակը նվազում է: Սակայն դեռ շատ վայրերում կարելի է հանդիպել ջրաղացների: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Բրյանսկի մարզում: Նոր ջրաղաց է կառուցվել Մարի Հանրապետությունում: Գործող քամու աղացներ եւ ջրաղացներ կան նաեւ Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում: Իսկ Հոլանդիայում պահպանվել են տասնյակ հողմային աղացներ, հիմնականում տուրիստական նպատակների համար: Օրինակ՝ Կիրխբերգ գյուղում: Այստեղ կարելի է տեսնել, թե ինչպես էին հին դարերում ալյուր ստանում, իսկ ջրաղացի երկրորդ հարկում գոյություն ունի հնամենի գյուղատնտեսական իրերի թանգարան: Ընդ որում, այստեղից կարելի է տանել ինչ-որ բան:

Ջրաղացները կառուցվում էին գետակների եւ առուների վրա, այնպիսի տեղերում, որ հնարավոր լիներ փայտե, քարե, հետագայում նաեւ մետաղյա խողովակով թեքությամբ գահավիժող ջրի ուժով պտտեցնել թափանիվը, դրա միջոցով էլ վերին կամ շարժական ջրաղացքարը: Հաճախ միեւնույն առվի կամ գետակի վրա կառուցվել են տասնյակ ջրաղացներ, որոնք սպասարկել են շրջակա բնակավայրերին: 19-րդ դարի 20-ական թվականների վերջին Հայկական մարզում գոյություն ունեին 1456 ջրաղաց, 138 դինգ, իսկ Երեւան քաղաքում՝ 47 ջրաղաց, 6 դինգ: Ջրաղացներն ունեին շատ պարզ կառուցվածք: Դրանք բաղկացած էին ջրաղացքարից, որը տեղադրված էր նույն մեծությամբ, բայց ավելի բարակ, մի այլ անշարժ քարի վրա, ուղղաձիգ ուղղությամբ մի առանցքից, որը վերեւում հատուկ հարմարանքով մտնում էր ջրաղացքարի վրա փորված փոսիկի մեջ, իսկ ներքեւի ծայրում իր վրա կրում էր թեւավոր անիվ: Ջուրը մի քանի մետր բարձրությունից հարվածելով թեւավոր անիվին՝ դնում էր շարժման մեջ: Թեւավոր անիվի շարժումը ուղղահայաց առանցքի միջոցով հաղորդվում էր ջրաղացքարին եւ վերջինս էլ սկսվում էր պտտվել: Ջրաղացքարի շարժումը կանոնավորում էին փայտյա հատուկ լծակով, որը կապված էր պտտվող մեխանիզմին. այդ նույն արդյունքին կարելի էր հասնել նաեւ ջրի ավելացման ու պակասեցման միջոցով: Ջրաղացն իր շենքով մի խղճուկ հյուղակ էր :

Ջրի անկման ուժին համեմատ, ջրաղացքարերը լինում են մեծ կամ փոքր: Մեծ ջրաղացքար ունեցող ջրաղացները 24 ժամում կարող էին աղալ ավելի քան 30 փութ հացահատիկ: Ջրաղացներից 32-ը պատկանում էին քաղաքի բնակիչներին, իսկ մնացածները՝ սարդարին, մյուս խաներին եւ վանքերին: Սարդարական եւ խանապատկան ջրաղացները Հայկական մարզի կազմակերպումից հետո համարվեցին պետական: Երեւանում խանական շրջանում հայտնի էր Զանգվի գետի վրա, կամրջից վերեւ գտնվող իննաչքանի «Դոխկուզ-Դայիրման» ջրաղացը, որը հետագայում էլ մնաց իբրեւ գործող ջրաղաց:

Դինգերի (սանդ, հավանդ) միջոցով օրիզը վերածում էին բրնձի՝ մինչ այդ անցկացնելով նախ թեթեւ ջրաղացքար ունեցող ջրաղացով: Սրանք եւս առանձին բարդություն չունեին: Ի տարբերություն ալրաղացների, դինգերում, մինչեւ օրիզը վերածվում էր սովորական բրնձի, կատարվում էին երեք եւ ավելի պրոցեսներ: Լավորակ օրիզի ամեն մի խալվարից (30 փութ) ստացվում էր կես խալվար բրինձ: 1892թ. Երեւանում շարք է մտել Ավետովի դինգը՝ բրինձ մաքրող ջրաղացը: 1910թ. Երեւանում շահագործվել է Կիրիլ Սիլչենկոյի ալրաղացը, որն աշխատել է էլեկտրական էներգիայով: Երեւան քաղաքում 1829/1832թթ. եղել է 23 ջրաղացպան, 1851թ.՝ 15, 1865թ՝. 72, 1879թ՝ 14: Ինչպես երեւում է բերված թվերից, ջրաղացպան վարպետների թիվը գնալով պակասում է: 1950-ական թվականներին էլեկտրական աղացների երեւան գալու հետ ջրաղացներն աստիճանաբար կորցրեցին իրենց նշանակությունը:

Աշտարակի ջրաղացը կառուցված է տուֆ քարով: Ունի բնակելի եւ տնտեսական կառույցների բարձրությանը մոտեցող բարձրություն: Պատի առաջին շարքերը շարված են համեմատաբար խոշոր քարերով, որից հետո շարքերի քարերը ավելի փոքրանում են: Բացվածքները փոքր են, որոնք ապահովում են ինչպես լուսավորությունը, այնպես էլ օդափոխությունը: Այսպիսի լուծումը նպատակ է ունեցել հարմարություն ստեղծել ջրաղացի բոլոր վեց աչքերին էլ մոտենալու համար: Այս ջրաղացի բնորոշ կողմերից մեկն էլ այն էր, որ հետեւի պատում կան օժանդակ դռներ՝ ավելի կարճ ճանապարհով դուրս գալու դեպի կամրջի վրայով անցնող բանուկ ճանապարհը:



1898թ. Կարսում գործել են 5 ջրաղաց, յուրաքանչյուրում աշխատել են չորս մարդ:

Լեռնային Ղարաբաղի համարյա թե բոլոր գյուղերում ջրաղաց կար: Իսկ 20-րդ դարի սկզբներին որոշ գյուղերում ալրաղացները մեքենայացվել էին: Մասնավորապես, Գյունե Ճարտար եւ Գյունե Կալեր գյուղերում կային մեքենաղացներ, որոնց արտադրողականությունն անհամեմատ շատ բարձր էր:

Ջրաղացներ աշխատել են նաեւ Աղստեւ գետի վրա: Աղստեւ հովտի բնակիչները իրենց տնտեսական կարիքները թեթեւացնելու նպատակով օգտագործել են գետի ուժը. կառուցելով ջրաղացներ եւ սղոցարաններ: Տեղի բնակիչները երկար տարիներ իրենց աղունը աղում էին ձեռքի քարե երկանքով:

Դիլիջանում ասիական տիպի՝ մեկ-երկու քարերով ջրաղացներ եղել են երեք հատ: Դրանցից մեկը գտնվել է Կալինին փողոցի վերին հատվածում՝ գետի ձախ ափին եւ պատկանել է ոմն պողոսքիլիսեցու: Երկրորդը պատկանել է Դավթյաններին, գտնվել է գետի աջ ափին, կահույքի ֆաբրիկայի տարածքում: Հետագայում Մեխակ Դավթյանը վերափոխել է ջրի ուժով աշխատող կալի: Հաջորդը պատկանել է Սաղաթելյաններին, իր գոյությունը պահպանել է մինչեւ 20-րդ դարի հիսունական թվականները:

Գոյություն է ունեցել նաեւ շվեյցարական տիպի ջրաղացը: Այն ժողովուրդն անվանել է «Հակոբ-ֆյոխվանց» ջրաղաց:



1862թ. Մ. Սմբատյանը, շրջագայելով Աղստեւի հովտի պատմամշակութային շինությունները (Նոր Գետիկ, Հաղարծին, Ճարխաչ), գալիս է նաեւ Դիլիջան: Բեքման անունով մի գերմանացի ճարտարապետ Ղարաքիլիսա ձգվող մայրուղուն կից կառուցել եւ շահագործել է գործարան: Այն աշխատել է ջրի ուժով:

Դիլիջանում արդեն գործող հին ասիական ջրաղացների փոխարեն տեղի ռուսները կառուցում եւ գործարկում են շվեյցարական տիպի թափանվով ու տրանսմիսիոն մեխանիզմով ջրաղացներ, որոնք աղունը վաղորոք զտում, չորացնում եւ ապա աղում էին ավելի մեծ արտադրողականությամբ: Այդպիսիներից էին Սեմյոնովների, Վասոլինների, Գոլովինոյի, քաղաքային հիվանդանոցի շենքից ներքեւ, գետի ափին կառուցված Հակոբ-ֆյոխվանց ջրաղացը:

Հայաստանում ջրաղացներ կառուցել են գրեթե բոլոր գյուղերում, որոնց մոտով հոսել են գետակներ: Հացահատիկը ջրաղաց բերելու գործը հեշտացնելու նպատակով, ջրաղացի տերը կառուցել է ճանապարհներ, լաստանավ, կամուրջ եւ այլն: Շատ հաճախ ջրաղացները կառուցել են կասկադային եղանակով: Մեկ ջրաղացում աշխատած ջուրը տրվում էր մյուս ջրաղացին: Փոքր գետերի վրա գտնվող ջրաղացները ամռան ամիսներին չէին աշխատում ջուր չլինելու, իսկ ցուրտ կլիմայական պայմաններում ջրի սառչելու պատճառով: Ջրաղացի աշխատելու համար կառուցել են նաեւ արհեստական ջրամբարներ: 1808թ. Երեւանում Հրազդան գետի վրա եղել է ինը ջրաղաց: 1956թ. Կոշ գյուղում եղել է 5 ջրաղաց, Արթիկում՝ 7, Թալինում եւ Օշականում՝ 8-ական:

Ջրաղացի կառուցումը եւ շահագործումը թանկ արժեր: Այդ իսկ պատճառով այն ունեին հարուստ մարդիկ: Քանի որ ջրաղացները եկամտաբեր էին, միջնադարում նրանք անցնում են խոշոր ֆեոդալական կամ վանքապատկան տնտեսություններին: 1736թ. Էջմիածնի վանքին է պատկանել 10 ջրաղաց: Որոշ դեպքերում, վանքերին տրվել է ջրաղացի օգուտի մի մասը:

Ջրաղացքարի պտույտի արագությունը կազմում է րոպեում 100-ից մինչեւ 200 պտույտ: Նրանք ունեցել են մի քանի սենյակներ: Մեծ սենյակում տեղադրվել են ջրաղացքարերը, իսկ մյուս սենյակները ծառայել են որպես ջրաղացպանի, հացահատիկը պահելու համար: Եղել է նաեւ բեռնակիր անասունների համար գոմ: Ջրաղացի լայնությունը 3-ից 5 մետր է , իսկ բարձրությունը ամենաշատը 3,2 մ: Ջրաղացքարերը տեղադրում էին իրարից 1,5 մ, իսկ պատից մոտ 1 մ հեռավորության վրա: Հնում ջրաղացները լուսավորվել են երդիկից: Պատուհաններ սկսվեց օգտագործվել 19-րդ դարից սկսած: Ջրաղացի շենքը չի տաքացվել:

Հին հույն պատմաբան Ստրաբոնը նշել է, որ Կաբիրիում թագավորի պալատի մոտ տեսել է ջրաղաց: Ջրաղացում տեղի էր ունենում ամենապարզ աշխատանքը, որին չէին մասնակցում ստրուկները: Հացահատիկը մանրանում էր երկու քարերի արանքում:

Արդեն 2-րդ դարում ջրաղացներ էին աշխատում շատ վայրերում: Օրինակ, հռոմեացիները ջրաղացներն օգտագործում էին ճզմելով յուղ ստանալու, խնձորները փափկեցնելու համար: Կենտրոնական Եվրոպայում ջրաղացների մասին առաջին հիշատակումը վերաբերում է 340 թվականին: Ֆրանսիայում ջրաղացը հայտնվել է մոտավորապես 8-րդ դարում, իսկ 1086թ. Տրենտում ու Սեւերնում գոյություն ուներ 5624 ջրաղաց: Ջրաղացից մի քիչ ավելի ուշ կառուցվել են նաեւ հողմաղացները: Այդ մասին առաջին հիշատակումը վերաբերում է 644թ.:

Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց կատարելագործվեց նաեւ ջրաղացը: Ջրի ուժի օգնությամբ պտտում էին հաստոցները եւ կատարում բազմաթիվ ծանր աշխատանքներ: Գոյություն են ունեցել նաեւ մակընթացային ջրաղացներ, որոնք առաջին անգամ հայտնվել են Ադրիատիկ ծովի ափին, 1044թ.: Հետո նաեւ՝ Անգլիայում ու Ֆրանսիայում: Մակընթացային ջրաղացների մասին է խոսվում նաեւ Իվան Ահեղի շնորհագրի մեջ, որտեղ հիշատակվում են Սպիտակ ծովի ափին Ուս-Ջոլոտիցեում եւ շատ այլ տեղերում գտնվող ջրաղացները:

Ներկայումս Հայաստանում կարեւոր է ջրաղացների պահպանության խնդիրը: Այն պետք է դիտարկվի որպես պատմաճարտարապետական հուշարձան եւ պահպանվի պետության կողմից: Հնարավոր է նաեւ Տաշտուն գյուղի ջրաղացը ներգրավել մշակութային տուրիզմի բնագավառում:

Առաջարկում եմ Տաշտուն գյուղի ջրաղացը վերանորոգել եւ շահագործման ժամանակակից պահանջներին հարմարեցնելով՝ վերաշահագործել: Այն հնարավորություն կտա պահպանելու ազգային ճարտարապետության մշակութային ժառանգությունը՝ երկրի սահմանամերձ գյուղական վայրերի տնտեսության խթանման եւ զարգացման համար: Թերեւս կգտնվեն գործարար մարդիկ, որոնք կարող են աջակցել այս կարեւոր խնդրի բարեհաջող լուծմանը:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
*ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ*

---

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔ**

## Նարեկ Սարգսյանը երկար սպասել չտվեց

### *Երեւանի ո՞ր հատվածը կլինի նրա հաջորդ թիրախը*

Երբ Նարեկ Սարգսյանին Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը նշանակեց մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ, հասարակական շարժում սկսվեց այդ նշանակման դեմ: Ինչը բնական էր եւ հասկանալի: Նախկինում այդ պաշտոնում աշխատած այդ անձնավորության գործունեության արդյունքները երեւանցիների աչքի առջեւ են՝ օղակաձեւ զբոսայգու կանաչ տարածությունների բարբարոսական ոչնչացումը ցեմենտբետոնյա սրճարաններով, օպերայի շենքի, Ավետիք Իսահակյանի արձանի կլանումը նույն սրճարանների կողմից, ամբողջ քաղաքով մեկ մայթերի եւ հասարակական նշանակության տարածքների հաշվին կառուցված շինությունները, շենքերի տանիքների այլանդակ կցակառույցները եւ այլն: Մի խոսքով, Երեւանի առանց այն էլ ոչ փայլուն ճարտարապետական տեսքը այդ տարիների գլխավոր ճարտարապետի ջանքերով կամ հանդուրժողությամբ էլ ավելի այլանդակվեց:

Արձագանքելով Նարեկ Սարգսյանի նշանակմանը, խորհուրդ տվեցինք սպասել, թե այս անգամ Երեւանի գլխին ինչ պատուհասներ կբերի նա, որն, ի դեպ, մի քանի տարի առաջ առաջարկում էր մայրաքաղաքն առանձին քաղաքների տրոհել: Ինչպես կարելի էր ենթադրել, Նարեկ Սարգսյանը երկար սպասել չտվեց:

Առաջինը Հայաստանի կառավարության շենքի այսպես կոչված թմբուկի կառուցման գաղափարն էր: Ինչպես միշտ, այս անգամ էլ Նարեկ Սարգսյանը վկայակոչում է Ալեքսանդր Թամանյանին, «մոռանալով», որ օպերային թատրոնի շենքի եւ Հանրապետության հրապարակի համալիրը միմյանց կապելու նրա մտահղացումներն արդեն իսկ խաթարվել են: Խաթարվել են պատմության թանգարանի շենքի կառուցմամբ, Հյուսիսային պողոտայի թամանյանական տարբերակի ձեւախեղմամբ եւ վերեւում նշված՝ օպերայի շենքի սրճարանախեղդ լինելով: Վերոնշյալի պատճառով թմբուկի կառուցումը ոչ մի տրամաբանական կապ չի ունենա օպերայի շենքի հետ, ինչպես նախատեսել էր Թամանյանը: Հետեւաբար, թմբուկի կառուցումը ոչ այլ ինչ է, քան ավելորդ ծախս եւ եւս մեկ կառույց խիտ կառուցապատված Երեւանի կենտրոնում: 10 մլն դոլար արժողությամբ այդ նախագիծը, սակայն, մեծ եկամուտներ է խոստանում դրա հեղինակին:

Նույն «հիմնավորումն» ունի Նարեկ Սարգսյանի մտքի մյուս «փայլատակումը»՝ մետրոյի Հանրապետության հրապարակի մոտ նոր հյուրանոցի կառուցումը: Այս նախագիծն արդեն արժանացել է Երեւանի քաղաքապետարանի եւ Հայաստանի կառավարության հիմնավորմանը: Կարեւոր չէ, որ դրա դեմ են արտահայտվում բնապահպանները, ճարտարապետները (այդ թվում՝ այդ տարածքի նախագծի հեղինակ ճարտարապետը), լրատվամիջոցները, ընդհանրապես երեւանցիները: Բոլոր այդ մտահոգություններին գլխավոր ճարտարապետը պատասխանների մշակված տարբերակներ ունի: Ըստ նրա, դրանք կամ «անձնավորված են», կամ «ուղղորդված», կամ «ոչ մասնագիտական»: «Մի՞թե այդ տարածքում տեղ կա հյուրանոց կառուցելու համար», յուրաքանչյուրի մեջ այս հարցն առաջինն է ծագում, երբ իմանում է նոր հյուրանոցի վայրի մասին: Սակայն քանի որ Նարեկ Սարգսյանը ցանկանում է, որ հյուրանոցը կառուցվի հենց այդ տեղում, ապա քաղաքապետարանում ու կառավարությունում էլ չի առաջանում բոլորի մեջ առաջացող «Մի՞թե այդ տարածքում տեղ կա հյուրանոց կառուցելու համար» հարցը:

Փորձենք կռահել, թե մայրաքաղաքի ո՞ր հատվածը կլինի Նարեկ Սարգսյանի հաջորդ թիրախը: Հավանաբար դարձյալ կենտրոնը, քանի որ նա, ոչ առանց լուրջ ակնկալիքների, հատկապես սեւեռված է այս հատվածի վրա: Բացառված չէ, որ շատ շուտով կվերակենդանանա Հանրապետության հրապարակի Լենինի արձանի տեղում ինչ-որ այլ արձան տեղադրելու գաղափարը: Նման փորձ եղավ մի քանի տարի առաջ, բայց, բարեբախտաբար, անհաջող: Հրապարակի այդ հատվածը մնաց կանաչապատ եւ ծաղկապատված: Այս «թերացումը» գլխավոր ճարտարապետը չի հանդուրժի: Նա «դատարկություն» չի սիրում:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Դեսպան Ժաբրայիլ Ժեաարա. «Լիբանանա-հայկական հարաբերությունները անամպ երկնքի նման են»

## *Ութ տարի Հայաստանում՝ միայն բարի զգացմունքներ*

**- Պարոն դեսպա՛ն, Դուք ութ տարի աշխատեցիք Հայաստանում որպես մեր երկրում Լիբանանի արտակարգ եւ լիազոր դեսպան: Դա անկախ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի պատմության մեջ, կարելի է ասել, աննախադեպ է...**

- Այո՛, Սիդնեյում, Մոսկվայում, Ամմանում, Թունիսում, Լիբերիայում, Լիբանանի ԱԳՆ կենտրոնական ապարատում ծառայելուց հետո այս ութ տարին, որ աշխատեցի որպես դեսպան Հայաստանում, իսկ վերջին երեք տարին էլ՝ որպես ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի դուայեն (ավագ), իսկապես ամենաերկարն էին դիվանագետի իմ բազմամյա կարիերայում: Այնպես որ, կարծում եմ, ես կարող եմ խոսել ՀՀ-ում հավատարմագրված ամբողջ դիվանագիտական կորպուսի անունից: Փաստորեն, Հայաստանի անկախության այս 20 տարիների գրեթե կեսը ես անցկացրել եմ այստեղ:

Ինչ վերաբերում է մեր երկու երկրների միջեւ քաղաքական հարաբերություններին, ապա, պատկերավոր ասած, այս ութ տարիների ընթացքում դրանք մնացին որպես մի «անամպ երկինք», եւ բոլոր հարցերը լուծվում էին համագործակցության եւ հարգանքի ոգով: Եվ ամեն անգամ, երբ Երեւանից գնում էի Լիբանանի ԱԳՆ, այնտեղից դուրս էի գալիս գոհ եւ հպարտ, որ մեր երկկողմ քննարկումները շատ արդյունավետ են եղել: Այս առիթով կուզենայի շնորհակալություն հայտնել ինչպե՛ս ՀՀ ԱԳ նախորդ նախարար Վարդան Օսկանյանին, այնպե՛ս էլ ներկայիս նախարար Էդվարդ Նալբանդյանին:



Որպես դիվանագիտական կորպուսի ավագ, ես ընդունել եմ Հայաստան եկող տարբեր երկրների դեսպաններին, եւ դա լավ առիթ է եղել, որ ես այլ ժողովուրդների հետ ավելի լավ ծանոթանամ:

Ինչ վերաբերում է տնտեսական բնագավառին, ապա այստեղ շատ գործ է արվել:

Այս կապակցությամբ առաջին հերթին պիտի նշեմ Ղ-Տելեֆոն/VivaCell բջջային օպերատորի մուտքը Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ: Եվ չնայած նրան, որ VivaCell-ի բաժնեթղթերի մեծ մասը վաճառվեց (ռուսաստանյան MTC ընկերությանը՝ **խմբ**.), սակայն դրա «ուղեղը» մնաց լիբանանյան՝ դրա անփոփոխ ղեկավարն է պրն Ռալֆ Յիրիկյանը...

**-... Դե՛, հայ-լիբանանյան հարաբերությունների մասին խոսելիս, հնարավոր չէ խուսափել Հայաստանում այսօր աշխատող ամենահայտնի լիբանանահայի՝ Ռալֆ Յիրիկյանի անունը նշելուց...**

- Անշուշտ, եւ այս մասին դեռ կխոսեմ:

Ինչ վերաբերում է բանկային ոլորտին, ապա «Անելիք» բանկի 51 %-ը պատկանում է «Gredit Liban» բանկին, Հայաստանում գործում է նաեւ լիբանանյան «Byblos» բանկը:

Ավելացնեմ, որ ՀՀ պետռեգիստրում այսօր գրանցված է մոտ 100 ընկերություն, որոնց հիմնական բաժնետերերը Լիբանանի քաղաքացիներ են:

Աշխատեցինք նաեւ տուրիզմի զարգացման ուղղությամբ: Հայաստան եկող լիբանանցիների քանակը, որոնց ճնշող մեծամասնությունը կազմում են լիբանանահայերը, զգալիորեն գերազանցում է այստեղից Լիբանան մեկնողների թվին, եւ դրա հիմնական պատճառը անկայուն վիճակն է Լիբանանում:

Ինչպես գիտեք, անցած տարվա հոկտեմբերին նախատեսված էր Լիբանանի Հանրապետության վարչապետ Սաադ ալ-Հարիրիի այցը Հայաստանի Հանրապետություն, ինչը, անկասկած, մի նոր խթան կհանդիսանար մեր երկու բարեկամ երկրների հարաբերությունների՝ ներառյալ տնտեսության ոլորտը՝ հետագա զարգացման համար, սակայն ամենավերջին պահին՝ հենց վերը նշված այդ հանգամանքի պատճառով այցը հետաձգվեց: Սակայն, ինչպես գիտենք, դիվանագիտական հարաբերությունները, մանավանդ՝ բարեկամ երկրների միջեւ, շարունակական են, ինչպես ինքը՝ կյանքը...

Ինչ վերաբերում է մշակույթին, ապա գիտեք, որ դեռ խորհրդային տարիներից սկսած Հայաստանից բազմաթիվ՝ երգի-պարի, այլ համույթներ հյուրախաղերով էին հանդես գալիս Լիբանանում, եւ Հայաստանի՝ անկախություն ձեռք բերելուց հետո՝ ՀՀ մշակույթի նախարարությունը այս կապը շարունակեց: Ավաղ, մեր երկրում անկայուն վիճակը որոշ ժամանակահատվածներում հետաձգեց այդ խմբերի այցելությունը Լիբանան:

Մենք մեր կողմից երկու տարի առաջ կազմակերպեցինք լիբանանյան մշակութային շաբաթ Հայաստանում:

Ինչպես նաեւ գիտեք, Երեւանի մանկական (նախկինում՝ Կիրովի անվ.) զբոսայգում մի քանի տարի առաջ տեղադրեցինք լիբանանցի մեծ բանաստեղծ եւ փիլիսոփա Ժուբրան Խալիլ Ժուբրանի կիսանդրին եւ առաջին անգամ փոխադրեցինք արեւմտահայերենից արեւելահայերենի Ժուբրանի «Մարգարեն» («The Prophet») գիրքը, եւ տպագրելով 5 հազար օրինակով, բաժանեցինք հայաստանցի ընթերցողներին: Անկասկած, մշակութային համագործակցությունը մեր երկու երկրների միջեւ մեծ ապագա ունի:

Հիմա կցանկանայի մի փոքր խոսել Հայաստանում ապրող եւ աշխատող Լիբանանի քաղաքացիների մասին: Այդ լիբանանահայերը, ով՝ սկսած 1991 թ.-ից եկել եւ շարունակում են գալ Հայաստան, կապի մեջ են ՀՀ-ում Լիբանանի դեսպանության հետ:

Ինչպես Դուք արդեն վերը նշեցիք, Ռալֆ Յիրիկյանը Հայաստանում Լիբանանի քաղաքացիների համայնքի ամենահարգված անդամներից է:

Ինչպես բոլորը գիտեն, ընդամենը մի քանի ամիս առաջ Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սուլեյմանը հրավիրեց պրն Յիրիկյանին նախագահական պալատ Բաաբդայում ու պարգեւատրեց «Նախագահական վահան» շքանշանով: Գիտե՛ք, մենք՝ Լիբանանում համարում ենք, որ եթե մի անձ գերազանցությամբ ծառայում է մի այլ երկրում՝ այն էլ Հայաստանի նման բարեկամական, ապա նա ծառայում է Լիբանանին:

**- Մի փոքր պատմեք, խնդրե՛մ, Լիբանանում ներկայիս իրավիճակի մասին:**

- Նոր կազմված կառավարությունն արդեն սկսել է իր գործունեությունը: Ինչպես գիտեք, Լիբանանը բազմաթիվ քաղաքակրթությունների խաչմերուկ է եւ տարբեր դավանանքների եւ մշակույթների ներդաշնակ համակեցության եւ երկխոսության վայր:

Այսօր աշխարհի տարբեր համալսարաններում եւ գիտական կենտրոններում փորձում են գտնել տարբեր կրոնների եւ ազգերի խաղաղ համակեցության բանաձեւը, իսկ մենք՝ Լիբանանում, այն վաղուց գտել ենք:

Դրա լավագույն օրինակներից է Լիբանանի Հանրապետության իշխանությունների կողմից մարտի 25-ը՝ որպես Սբ. Մարիամ Աստվածածնի մեծարման օր հռչակելը՝ թե՛ քրիստոնյաների, թե՛ մուսուլմանների համար, քանի որ դա համապետական տոն է:

Հիմա ուզում եմ խոսել Լիբանանին վերաբերող ուշագրավ մի նորության մասին՝ մեր երկրի ջրերում՝ հարավում, Իսրայելի հետ սահմաններից սկսած՝ նավթի ու գազի պաշարների հայտնաբերման վերաբերյալ՝ 150 կմ տարածքում, որոնք գնահատվում են մոտավորապես 150 մլրդ դոլար: Եվ Լիբանանի խորհրդարանն ընդունեց մի օրենք՝ նավթի եւ գազի վերաբերյալ: Այսօր աշխատանքներ են տարվում հորատումների ուղղությամբ:

Մենք ուզում ենք միայն այն, ինչ մեզ է պատկանում ըստ միջազգային (ծովային) իրավունքի, եւ թույլ չե՛նք տա, որ մեր իրավունքները ոտնահարվեն, ով էլ դա լինի՛:

Մենք պաշտպանե՛լ ենք մեր հողերը եւ կպաշտպանե՛նք մեր ջրերը:

Կիպրոսի հետ ջրային սահմանազատման (դեմարկացիա՝ **խմբ**.) հարցերը, վստահ եմ, լուծելի են առանց ինչ-ինչ խնդիրների: Եվ հայտնաբերված այս հարստության հետ մենք մեծ հույսեր ենք կապում, որպեսզի մարենք մեր երկրի արտաքին պարտքը եւ զարգացնենք Լիբանանը:

Կարծում եմ, որ ընդամենը 4-5 տարում մենք կստանենք այդ նավթը եւ գազը: Վստահաբար, շատ շուտով կսկսենք անընդհատ լուրեր ստանալ Լիբանանի գազի եւ նավթի պաշարների մասին, եւ այս մասին ես տեղեկացրի վերջերս կայացած հանդիպման ժամանակ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

**- Ձեր՝ որպես փորձառու դիվանագետի աչքերով, ինչպե՞ս էր այս ութ տարիների ընթացքում փոխվում Հայաստանը:**

- Հայաստանի երրորդ Հանրապետությունն ունեցել է եւ դեռ կունենա խնդիրներ, եւ դա շատ բնական է երիտասարդ պետության համար:

Փակ սահմանները Թուրքիայի հետ, պատերազմական վիճակը Ադրբեջանի հետ ավելացնում են դրանց թիվը:

Սակայն, չնայած այս ամենին, երկրի ներքին կյանքում զգացի զարգացում՝ շինարարության, մեքենաների թվի ավելացում՝ խցանումներով, այլ բաներ:

Իսկ ամենակարեւորը՝ Հայաստանի երիտասարդությունն է՝ նոր սերունդը, իրենք զարգացած են, ավելի բաց աչքերով են նայում աշխարհին, եւ, գլխավորը՝ կամք ունեն ինքնահաստատվելու եւ աշխատելու:

Գաղտնիք չէ, որ երկրի զարգացման համար առաջին հերթին դրա քաղաքացին պե՛տք է զարգացած լինի:

**- Ի՞նչ եք տանելու Ձեզ հետ Հայաստանից:**

- Հայաստանի կապույտ երկինքը, Սեւանա լճի գեղեցկությունը, հայոց եկեղեցիների խունկի բույրը, եւ, իհարկե՛, հայ ժողովրդի մասին փառապանծ հիշողությունները:

Հեռանալով Հայաստանից, մաղթում եմ, որ այստեղ նույնիսկ մեկ երեխայի լաց չլինի...

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԺԱԿՅԱՆ

ՏՐԻՊՈԼԻ

# Արդեն 50 հազար զոհ Լիբիայում

## *Ապստամբների վերջնագիրը եւ բրիտանական 1,6 միլիարդը*



Լիբիացի ապստամբները հայտարարել են, որ քաղաքացիական պատերազմի 6 ամիսներին երկրում սպանված անձանց թիվը հասնում է 50 հազարի: Գնդապետ Հիշամ Բուխագիարի խոսքերով, միայն Միսրատա քաղաքի համար մղված կատաղի մարտերի ընթացքում սպանվել է 7000 մարդ: Լիբիայի ամբողջ բնակչությունը 6,6 միլիոն է:

Անցումային ազգային խորհրդի նախագահ Մուստաֆա Աբդել Ջալիլը Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է, որ ապստամբները վերջնագիր են ներկայացրել Մուամմար Քադդաֆիի կողմնակիցներին. եթե մինչեւ շաբաթ վերջիններս զենքը վայր չդնեն, ապա ընդդիմության զորքերը կգրոհեն Քադդաֆիի հայրենի քաղաք Սիրտը եւ նրա կամակատարներին ենթակա մյուս բնակավայրերը:

Ջալիլը Ալժիրի իշխանություններին կոչ է արել օժանդակել, որ այդ երկիր փախած Քադդաֆիի հարազատները կանգնեն դատարանի առջեւ:

Քադդաֆիին հավատարիմ զորքերը շարունակում են իրենց ձեռքին պահել երկրի հարավ-արեւմուտքում գտնվող Բանի-Վալիդ եւ Սաբհա քաղաքները: Որոշ տեղեկությունների համաձայն, Բանի Վալիդում է թաքնվում Քադդաֆիի որդիներից մեկը՝ Սեյֆ ալ Իսլամը, որը վերջին տարիներին հոր մերձավորագույն օգնականն է եղել:

Ապստամբների առաջնորդները մերժել են Լիբիա միջազգային դիտորդներ գործուղելու ՄԱԿ-ի առաջարկությունը: «Մենք ի վիճակի ենք երկրում կարգուկանոն պահպանել առանց օտարերկրյա օգնության», հայտարարել է Ջալիլը:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Մեծ Բրիտանիային թույլատրել է Մուամմար Քադդաֆիի եւ նրա շրջապատի հաշիվներից 1,6 մլրդ դոլար ապասառեցնել Լիբիային արտակարգ օգնություն ցույց տալու համար: Լիբիական ակտիվները շտապ կարգով ապասառեցնելու կոչով ԱԽ-ին դիմել էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը: Նա համաշխարհային ընկերակցությունից պահանջել էր անհապաղ օգնել Լիբիային, քանի որ քաղաքացիական պատերազմի պատճառով երկրում պարենային ճգնաժամ է սկսվել:

Լիբիական ակտիվների ապասառեցման հարցի լուծումը հնարավոր դարձավ այն բանից հետո, երբ ԱԽ հակալիբիական պատժամիջոցների հանձնախմբի աշխատանքին մասնակցող Չինաստանը օգոստոսի 26-ին դադարեցրեց ընդդիմագործությունը:

Մեծ Բրիտանիայից առաջ ԱՄՆ-ը ԱԽ-ից թույլտվություն էր ստացել Քադդաֆիի հաշիվներից 1,5 մլրդ դոլար հասկացնել Լիբիայի նոր կառավարությանը եւ մարդասիրական կազմակերպություններին:

# Հակասիրիական նոր պատժամիջոցներ ԱՄՆ-ում

ԱՄՆ իշխանությունները ընդլայնել են սիրիացի այն պաշտոնյաների ցանկը, ում վրա տարածվում են ամերիկացիների հակասիրիական պատժամիջոցները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Նոր պատժամիջոցները վերաբերում են Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալլեմին, նախագահ Ասադի խորհրդական Բութայնա Շաաբանին եւ Լիբանանում Սիրիայի դեսպան Ալի Աբդուլլահ Քարիմ Ալիին: Ամերիկյան բանկերում նրանց հաշիվները պետք է սառեցվեն: Բացի դրանից, ԱՄՆ քաղաքացիներին արգելվում է գործնական հարաբերություններ ունենալ այդ անձանց հետ:

ԱՄՆ ֆինանսների նախարարությունում կարծում են, որ նման պատժամիջոցները թույլ կտան ուժեղացնել ճնշումը Բաշար Ասադի վարչակարգի վրա, որին Արեւմուտքի երկրները պատասխանատու են համարում խաղաղ ցուցարարների դեմ բռնությունների գործադրման համար:

Մայիսին ԱՄՆ-ը պատժամիջոցներ էր ձեռնարկել նախագահ Բաշար Ասադի եւ սիրիացի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների դեմ: Օգոստոսի 19-ին ամերիկյան պատժամիջոցներին ենթակա էին դարձել սիրիական խոշորագույն Commercial Bank of Syria բանկը եւ Syriatel հեռահաղորդակցական ընկերությունը: ԱՄՆ ֆինանսների նախարարության տվյալներով, այդ ընկերությունները «օժանդակում են Բաշար Ասադի վարչակարգի հակաիրավական գործողություններին»:

Խմբագրությանս կարծիքով, այս պատժամիջոցներն ընդամենը խորհրդանշական են. 1967թ.-ից ի վեր սիրիական ոչ մի իշխանություն վստահություն չի տածել ԱՄՆ-ի նկատմամբ. հետեւաբար հավանական չէ, որ պետական որեւէ պաշտոնյա ամերիկյան բանկերին վստահի իր գումարները...

# Օքե Դաուն

## Շվեդական մտածելակերպը

**1989-ին Ստոկհոլմում լույս տեսավ «Շվեդական մտածելակերպը» աշխատությունը, որի հեղինակն է Շվեդիայում ճանաչված ազգագրագետ, Ստոկհոլմի համալսարանի ազգագրության ինստիտուտի պրոֆեսոր, շվեդական մի շարք բարձրագույն պարգեւների արժանացած Օքե Դաունը: Այս յուրօրինակ աշխատության մեջ նա փորձում է պարզել շվեդական ազգային նկարագրի եւ շվեդական մշակույթի բնորոշ գծերը, արժեհամակարգը, նորմերը՝ փորձելով տալ դրանց ծագումը եւ մեկնաբանությունը: Գիրքը բուռն արձագանք է ստացել շվեդ հասարակության մեջ, թարգմանաբար հրատարակվել մի քանի լեզուներով: Այժմ աշխատությունը թարգմանվում է նաեւ հայերեն, որից մի հատված ներկայացնում ենք ընթերցողին:**

**Նշենք, որ պրոֆեսոր Օքե Դաունն իր հայազգի տիկնոջ՝ բանասեր Լաուրա Մինասյան-Դաունի հետ մի քանի անգամ եղել է Հայաստանում, գրել հոդվածներ հայոց ցեղասպանության մասին, ներգրավվել Շվեդիայում հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:**

### Հոմոգեն մշակույթ

Հոմոգեն (միատարր) մշակույթը միասնական մշակույթն է, որտեղ մարդիկ մոտ են իրար էթնիկապես, լեզվով, կրոնով եւ բարոյականությամբ: Շվեդական մշակույթը հոմոգեն է, ինչը, սակայն, չի նշանակում, որ այն պատմականորեն չի ենթարկվել օտար ազդեցությունների: Բացի այդ, միատարր լինելու աստիճանը տարբեր ժամանակահատվածներում փոփոխվել է: Միջին դարերում, օրինակ, մշակութապես ազդեցիկ գերմանական բնակչություն էր հաստատվել Ստոկհոլմում, եւ շվեդերենում մինչեւ օրս բազում գերմանական (եւ այլ) փոխառյալ բառեր կան: Օտարն ու շվեդականը մինչ այդ աստիճանաբար ձուլվել են իրար, այնպես որ նորաստեղծ տարրերը սկսել են ընկալվել որպես բնիկ շվեդական: Դրանք միացել են բուն «շվեդականին»: Միատարրությունը ենթադրում է «հորիզոնական» համերաշխություն, այսինքն՝ ժամանակի միջեւ նույն կտրվածքում բնիկ շվեդ բնակչության մեջ ընդունված մտածելակերպի չափազանց գերակշռող միասնություն:

Դա նշանակում է, որ որպես շվեդական մշակույթի անդամ, մարդ կարիք չունի զարգացնելու ուրիշ մարդկանց հասկանալու, նրանց մտքերը, մտադրությունները եւ այլ իրողությունները մեկնաբանելու հեռահար կարողություն, ինչպես հետերոգեն կամ դեզինտեգրված մշակույթի մեջ: Մարդ կարող է բավարարվել խոսքով: Բնականաբար, բոլոր մշակույթներում մարդիկ բառերից բացի բազմաթիվ այլ կոդեր են գործածում, օրինակ՝ հնչերանգը, դեմքի միմիկան, մարմնի շարժումները, հագնվելու ձեւը: Հոմոգեն մշակույթի մեջ, համենայն դեպս, այս բազմազան կոդերը գործածվում են համեմատաբար պարզ ձեւով՝ մարդուն թույլ տալով մտածել, որ հնարավոր է ուրիշներին համապատասխանաբար համարժեք ձեւով ընկալել: Շվեդները հիմնականում, ինչպես եւ նորվեգացիները, ենթադրում են, որ մարդիկ ի նկատի ունեն հենց այն, ինչ որ ասում են: Այն, որ սովորական մարդիկ «ազնիվ» են, նրանց հիմնական պատկերացումն է:

Պարբերականներից մեկում 1988-ին հարցազրույց էր տպագրվել 15 տարի Հունաստանում ապրող մի շվեդուհու հետ: Նա նկարագրում էր շվեդական «պարզ» կամ ազնիվ հաղորդակցության եւ Հունաստանում ընդունված հարաբերությունների բազմաթիվ շերտերի միջեւ հակադրությունը: «Համեմատելու համար, հունական զրույցի արվեստը լի է երկիմաստություններով ու երկդիմություններով, որը լեզվական զվարճասիրության մասն է կազմում: «Չհասկացա՞ր, ինչ ի նկատի ունեմ: Ի՞նչ միամիտն ես, ասում են իմ աշխատակիցները Հունաստանում: Մարդ քեզ պիտի ասի միայն այն, ինչը որ ի նկատի ունի»:

Մտածելակերպի այսօրինակ մեկնակետը հակադրվում է բազմատարր՝ հետերոգեն մշակույթների նախադրյալներին, որոնցում ենթատեքստը, ինչպես նաեւ իրավիճակը, շատ ավելի մեծ չափով պետք է հաշվի առնվի յուրաքանչյուր մեկնաբանության դեպքում: Դա կապված է այն բանի հետ, որ «թարգմանչական աշխատանքի» նկատմամբ մարդ ավելի խստապահանջ է դառնում, երբ հաղորդակցվում է իրենից տարբերվող մարդկանց հետ եւ այն բանի, որ մարդ օտարներից պակաս «հավասարմություն» է ակնկալում: Զգուշությունն, այսպիսով, տեղին է:

Սովորաբար «տողերի արանքում կարդալը» կամ մարդկային աննշան «ազդանշաններ» որսալը թույլ է տալիս մեկնաբանել այն, ինչ չի ասվել: Այդ նույն ձեւով էլ մարդիկ հետաքրքրվում են այլոց անհատականությամբ, սակայն որքան մարդն ավելի լավ է ճանաչում ուրիշների կոդային համակարգը, այնքան նա ավելի հակված է այդ առումով կրավորական դառնալ:

Այնպիսի մշակույթի մեջ, ինչպիսին շվեդականն է, որտեղ մշակութային միատարրության՝ հոմոգեն լինելու պատճառով մարդկանց միջեւ հաղորդակցության համար չի պահանջվում մեծ ճկունություն եւ արագ հարմարվելու կարողություն, մարդկանց համար ավելի հեշտ է ապավինել նորմերի համակարգին: Անկախ մտածողությունը, անձնական դատողությունն ընդունված նորմերի, կարգադրությունների՝ այսինքն «փաստերի» համեմատ անհուսալի հիմք ունեն: Սա թերեւս այլազգիներին օգնի պարզաբանել շվեդական հասարակության մեջ տարածված ապշեցուցիչ անճկունությունը:

....«Էքսպրեսեն» թերթի մի հոդվածում (13.12.1987) հեղինակը նկարագրում է Ստոկհոլմի Մշակութային տանը կատարված դեպքերի մասին, երբ Նոբելյան մրցանակակիր Իոսիֆ Բրոդսկին կարդալու էր իր բանաստեղծությունները: Հոդվածի հեղինակը ներս չէր մտել, քանի որ դահլիճը լիքն էր ու 40 կրոն արժողությամբ բոլոր տոմսերը վաճառված էին: «Մշակութային տան դահլիճի առջեւ կանգնած էր համազգեստով մի երիտասարդ հսկիչ: Նա իրավունք չուներ որեւէ մեկի առանց տոմսի ներս թողնել, եւ կանգնած էր այնտեղ՝ ձեռքերը կրծքին խաչած, բարձրահասակ ու խարտյաշ, երիտասարդ ու ամուր: Ընթերցումը սկսվել էր ժամը 13-ին, եւ մեկ ժամից առաջին ունկնդիրները, առանձին կամ փոքր խմբերով, սկսեցին լքել դահլիճը: Այդ ժամանակ դրսում կանգնածներից ոմանք հսկիչին խնդրել են իրենց ներս թողնել՝ ասելով, որ արդեն տեղեր են ազատվել: Նա մերժել է՝ պատասխանելով, որ հրահանգ է կատարում: Ամբողջ ընթացքում դահլիճից շարունակվել էր ունկնդիրների հոսքը, որոնք կա՛մ այլեւս չէին կարող մնալ, կա՛մ կարծում էին, որ արդեն բավականաչափ պոեզիա էին լսել իրենց 40 կրոնի դիմաց եւ ավելին չէին ուզում, կա՛մ բավականացել էին նրանով, որ ամեն դեպքում անձամբ եղան մրցանակաբաշխությանն ու տեսան Նոբելյան մրցանակակրին:

Իսկ դրսում կանգնածներին չէին թույլատրում ներս մտնել, չնայած փաստարկներ բերելու, խնդրելու եւ վիճաբանելու նրանց բոլոր ջանքերին: Մշակութային տան աշխատողներից մեկը, որը որոշ չափով մասնակցում էր քննարկումներին, անընդհատ վկայակոչում էր իր ղեկավարությանը: Երբ դանիական առոգանություն ունեցող մի ծեր կին ասաց, որ նա պետք է սովորի հետեւել սեփական բանականությանը, աշխատողը կրկին զանգահարել է իր ղեկավարին, որը եւս մեկ անգամ «ոչ» է պատասխանել»:

Փոխզիջման բացակայությունը, ինչի ապացույց էր տվյալ իրադարձությունը, չպետք է ընկալվի, որ իբրեւ թե շվեդները բոլորովին հակված չեն փոխզիջման, ինչպես որ ընդունված է կարծել: Փոխզիջման դիմում են միայն պրագմատիկ նպատակով, որպեսզի գործը գլուխ բերվի առանց չափազանց մեծ խոչընդոտների, արագ որոշում կայացնելու դեպքում: Որոշ դեպքերում էլ, հավանաբար, փոխզիջման գնում են կոնֆլիկտի արդյունքում տհաճ զգացումից խուսափելու համար: Բերված օրինակի դեպքում, հսկիչը ճկունություն հանդես բերելուց ոչինչ չէր շահում, ոչ մի մեծ նպատակի չէր հասնում: Փոխզիջման չգնալը, ընդհակառակը, զուգորդվում էր տրված հանձնարարության եւ հասարակական դերի կատարման հետ, ինչը վերագրվում էր շվեդական հանրային ծառայողներին, որոնք բոլորը թերեւս համանման կերպ են վարվում:

Լավ ինտեգրված միասնական շվեդական մշակույթի մեջ, որտեղ «ամեն ինչ փոխկապակցված է», ենթադրվում է, որ ամեն ինչ միավորվում է ավելի մեծ ամբողջության հետ: Հետերոգեն մշակույթի մեջ ապրող մարդկանց հետ համեմատած՝ շվեդներն ավելի մեծ հիմք ունեն կարծելու, թե գիտեն, հասկանում են, ամբողջությամբ պատկերացնում ու տիրապետում են իրենց մշակույթին: Միեւնույն բանը Թորդ Լարսենը գրել է նորվեգական մշակույթի վերաբերյալ: Նորվեգիայում ցանկացած փաստարկ այս կամ այն տեսակետը հիմնավորելու համար ենթադրվում է, թե գործում է որպես որոշակի խմբի պատկանելիության նշան, ինչն էլ պատճառ է դառնում, որ այն լիովին չի արժեւորվում որպես փաստարկ, «այլ ավելի շուտ ախտորոշում է որպես գերադաս ինքնության համախտանիշ, որի մասին մենք արդեն հստակ պատկերացումներ ունենք»: Մարդկանց «պիտակներ կպցնելու» միտումը, այսինքն՝ դասակարգելն ըստ նրանց տեսակետների, վստահաբար առկա է նաեւ զգալիորեն պակաս հոմոգեն մշակույթներում, քան շվեդականն ու նորվեգականը: Հետաքրքրականն այն է, որ աշխարհի մեր հատվածում այս միտումն ի հայտ է գալիս որպես բավական հաստատուն կաղապար:

Այս միտումը բավականաչափ պարզաբանում է շվեդական հաղորդակցման մոդելը. վիճահարույց հարցերի շուրջ սեփական տեսակետն արտահայտելու դժկամությունը ոչ այնքան մտերիմ մարդկանց մեջ, զգուշավոր, մասամբ կրավորական կեցվածքը, քանի դեռ հայտնի չէ դիմացինի դիրքորոշումը:

Անշուշտ, համեմատաբար միատարր մշակույթի պայմաններում էլ բնականաբար գոյություն են ունենում կարծիքների տարբերություններ ու խնդրահարույց հարցեր: Այնուամենայնիվ, միատարրությունը նույն ապահովությունը չի ընձեռում այլազգիների հանդիպելիս, ինչպիսին առկա է մտերիմ ընկերների շրջանակում: Ընդհակառակը, միատարրությունը հեշտությամբ այն սխալ պատկերացումն է ստեղծում, թե քիչ թե շատ մոտիկից ծանոթանալով մարդուն՝ վստահորեն կարելի է «դասակարգել» այլոց: Այս դեպքում առկա է «սխալ» ազդանշան տալու վտանգը. օրինակ, եթե սոցիալիստական հայացքների տեր մեկն ընդգծված կերպով բարձրաշխարհիկ ոճով հագնվի: Միանալով հաստատված կոդային համակարգին՝ մարդ նվազեցնում է սխալ մեկնաբանված լինելու վտանգը: Նախքան վիճահարույց հարցի շուրջ սեփական տեսակետն արտահայտելը՝ մարդ փորձում է զգուշորեն պարզել դիմացինի դիրքորոշումը:

Այն, ինչ շվեդներն ասում են իրար, այսպիսով, մեծ մասամբ մեկնաբանվում է որպես անձնական ինքնության կամ խմբային պատկանելիության նշաններ կամ խորհրդանիշներ: Ընդհակառակը, որքան ավելի բազմատարր է հասարակությունը, բնականաբար այնքան ավելի վտանգավոր կամ դժվար է դառնում նմանատիպ մեկնաբանություն անելը: Անհատի պատկերացումներն ու գիտելիքները մյուս խմբերի վերաբերյալ չափազանց սահմանափակ են, եւ հետեւաբար տեսակետները, գաղափարներն ու փորձառությունը ավելի հաճախ ընկալվում են իրարից անջատ, ինքնուրույնաբար՝ հոմոգեն մշակույթների համեմատ: Փաստորեն, մարդ հաճախ չի իմանում, թե որքանով են մարդիկ իրականում այն, ինչ թվում են:

Անգլիայում, օրինակ, սովորաբար նիստի մասնակիցներից մեկը ստանձնում է «ընդդիմախոսի դերը» եւ քննադատում է ներկայացված առաջարկը՝ փորձելով սխալներ եւ թույլ կողմեր գտնել: Այդ անձնավորությունը կարող է իրականում հատկապես դրական վերաբերմունք ունենալ առաջարկի նկատմամբ, սակայն կարեւոր համարի այն հիմնավորապես լուսաբանելը:

Շվեդիայում «սատանայի փաստաբանի» դերը ստանձնելը չափազանց հազվադեպ է հանդիպում, քանի որ տվյալ անձնավորությունը մյուսների կողմից հիմնականում զուգորդվում է իր արտահայտած քննադատական տեսակետների հետ: Ելույթից հետո մարդիկ թերեւս ասեն. «Ի՜նչ դժգոհ մաղձոտ մեկն էր, չարժի հետագայում նրա հետ գործ ունենալ»: Քննադատական տեսակետներն ընկալվում են իբրեւ անբարյացակամ դիրքորոշման «անկեղծ» արտահայտություն:

Շվեդերենից թարգմանեց
ԱՇԽԵՆ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ

---

ԵՐԱԽՏԻՔ

# Մատենադարանի նոր մասնաշենքի հովանավորներն արժանի են մեծարման



**Հաշված օրեր են մնացել Մատենադարանի գիտական նոր մասնաշենքի բացման արարողությանը, շենքն այժմ կահավորման ու բարեկարգման եռուզեռի մեջ է՝ Հայաստանի անկախության քսանամյակի նախօրեին ընդունելու բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց մտքի ու բազկի ուժն են տվել տարիներ ի վեր երազանք եղած, իսկ այսօր արդեն շոշափելի դարձած այս հիրավի հոյակերտ շինության վեր խոյացմանը: Հազիվ թե սպասվեր այդ երանելի իրադարձությունը, եթե չլինեին բարեգործության պատրաստ այն անհատները, որոնց համար Մատենադարանը ազգային զորեղ արժեք լինելու հետ մեկտեղ հարազատ տուն է՝ ձգողական ահռելի ուժով ու լեցուն սիրով: Նրանց մեծարելու ավանդույթը չի կարող ընդհատվել եւ ոչ մի պարագայում, անգամ այս օրերի թոհուբոհի մեջ: Հենց երեկ Գրիգոր Նարեկացու անվան սրահում տեղի ունեցավ Մատենադարանի խոշոր բարեգործներից եւ նվիրատուներից մեկի՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի մեծարման արարողությունը: Արդեն երկար տարիներ նա հովանավորում է Մատենադարանի զարգացման ծրագրերը, որոնց շնորհիվ հրատարակվել են բազմաթիվ գրքեր, ձեռք բերվել նոր ձեռագրեր: Մաքսիմ Հակոբյանը բարեգործական ֆոնդի պատվո անդամ է եւ հսկայական ներդրումներ է կատարել գիտական նոր համալիրի կառուցման գործում:**

**Մատենադարանի հետ կապվածության զգացումը խորացել է դեռեւս ուսանողական տարիներից. «Երբ ազատ ժամանակ էի գտնում, իմ կամքից անկախ ընկերներիս հետ քայլում էի դեպի Մատենադարան: Չգիտեմ, պատահականություն էր, թե՞ ճակատագրի թելադրանք, որ իմ գիտակցական կյանքում հնարավորություն ունեցա կապվելու գիտական այս համալիր ներքին աշխարհի հետ: Եվ ահա արդեն տասը տարի բարեկամություն եմ անում այս եզակի կառույցի հետ՝ փորձելով հնարավորինս օգտակար լինել նրա զարգացմանը: Ես ինձ համարում եմ երջանիկ, թող անհամեստ չհնչի՝ նույնիսկ հզոր մարդ, որ կարողացել եմ իմ համեստ ներդրումն ունենալ այս հոյակապ շենքի կառուցման գործում», ասաց Մաքսիմ Հակոբյանը:**

**Նա բարեգործական լայն գործունեություն է ծավալել տարբեր բնագավառներում, այդ թվում՝ եկեղեցաշինության: Ալավերդիում կառուցած Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու կառուցումը հովանավորելու համար Ամենայն հայոց կաթողիկոսից արժանացել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանին: Իսկ երեկ, Մատենադարանում կատարած մեծածավալ ներդրումների համար, Մաքսիմ Հակոբյանը պարգեւատրվեց Մատենադարանի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալով, նրան ընծայվեց Կիլիկիայում 1173 թվականին գրված Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ձեռագրի արծաթակազմ շքեղ նմանահանությունը:**

**«Մատենադարանի կենդանի պատմությունը կերտել են նաեւ բարեգործները: Ամեն մի ձեռագրի հիմքում, սերնդեսերունդ շարունակվող նրա կենսագրության մեջ բազմաթիվ խոնարհ, անանուն բարեգործների անուններ կան: Սերնդեսերունդ շարունակվող այդ տոհմաբանությունը, այդ ոսկե թելն է կենդանի պահում մեր մշակույթը: Եվ մենք այսօր հրավիրել ենք Մաքսիմ Հակոբյանին՝ մեր երախտագիտության խոսքն ասելու Մատենադարանի ողջ անձնակազմի, նաեւ անցած ու գալիք սերունդների անունից, քանի որ Մատենադարանը վերակերտում է նաեւ մեր անցյալն ու սերմանում ապագան», իր խոսքում ասաց Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը:**

**Մեծարման արարողությունից հետո Մաքսիմ Հակոբյանը շրջեց նոր մասնաշենքում՝ հիացմունք արտահայտելով ճարտարապետական հրաշալի լուծումների եւ աշխատանքային գրավիչ պայմանների առթիվ:**

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ВºЬЖк

# Կադրային խնդիրները չպետք է խոչընդոտեն Անդորրային հաղթելուն

## Դենիս Թումասյանը չներկայացավ հավաքին



Այսօր վաղ առավոտյան ֆուտբոլի Հայաստանի ազգային եւ երիտասարդական հավաքականները չարտերային չվերթով ուղեւորվեցին Բարսելոն, որտեղից ավտոբուսով մեկնեցին Անդորրա: Սեպտեմբերի 2-ին այդ երկրի ազգային հավաքականի հետ կմրցի Հայաստանի ազգային ընտրանին, իսկ հաջորդ օրը մրցասպարեզ դուրս կգան երիտասարդները: Ազգային հավաքականների մրցավեճը կսկսվի Երեւանի ժամանակով 21-ին, իսկ երիտասարդական ընտրանիների հանդիպումը նշանակված է ժամը 19-ին:

Անդորրայից ֆուտբոլային մեր պատվիրակության անդամների ճանապարհները կբաժանվեն: Ազգային հավաքականը կմեկնի Սլովակիա, որտեղ սեպտեմբերի 6-ին կմրցի տանտերերի հետ, իսկ երիտասարդականը կուղեւորվի Չեխիա՝ նույն օրը դուրս գալով խաղադաշտ:

Ինչ խոսք, առաջիկա խաղում մեր ֆուտբոլիստների հաղթելու հնարավորությունները գերադասելի են: Հիշեցնենք, որ անցյալ տարի Երեւանում Հայաստանի ազգային հավաքականը խոշոր՝ 4-0 հաշվով հաղթել է Անդորրայի ընտրանուն: Դա հավաքականի հանդիպումներում գրանցված ամենախոշոր հաշվով հաղթանակն է: Ընդհանրապես անդորրացիների հետ հանդիպումներում հայ ֆուտբոլիստները շատ հաջող են խաղացել, ուստի ֆուտբոլասերներն արտագնա խաղում էլ մեր ընտրանուց միայն հաղթանակ են ակնկալում:

Առաջիկա հանդիպումներին նախապատրաստվող Հայաստանի ազգային հավաքականը պաշտպանական գծում կազմի հետ կապված խնդիրներ ունի: Ընդհանրապես պաշտպանական օղակն այսօր մեր ընտրանու թույլ գիծն է: Դա հատկապես ցայտուն արտահայտվեց օգոստոսին Կաունասում Լիտվայի հավաքականի հետ կայացած ընկերական մրցախաղում, որում մեր ֆուտբոլիստները 0-3 հաշվով պարտություն կրեցին:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, առաջիկա հանդիպումներին չի կարող մասնակցել կենտրոնական պաշտպան Ռոբերտ Արզումանյանը, որը վնասվածքներից հետո թեեւ ապաքինվել է, բայց դեռեւս պատրաստ չէ: Նրա բացակայության պայմաններում դիտարկվում էր Եկատերինբուրգի «Ուրալի» պաշտպան Դենիս Թումասյանի թեկնածությունը, որին առաջին անգամ էին հրավիրել ազգային հավաքական: Սակայն անհասկանալի պատճառներով ռուսաստանցի ֆուտբոլիստն այդպես էլ չներկայացավ ուսումնամարզական հավաքին: Ինչպես տեղեկացանք ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունից, առայժմ պաշտոնական որեւէ գրություն չի ստացվել Թումասյանի բացակայության առիթով:

Կարծում ենք, որ առանձնապես անհանգստանալու հարկ չկա, քանի որ կենտրոնական պաշտպանի պարտականությունները Հրայր Մկոյանի հետ կարող է վստահորեն կատարել նախկին ուլիսցի Վալերի Ալեքսանյանը, որը ներկայումս հանդես է գալիս Իրանում: Վարդան Մինասյանը այդ գոտին կարող է վստահել նաեւ փյունիկցի Արթուր Յուզբաշյանին, որը կենտրոնական պաշտպանի գոտում խաղալու մեծ փորձ ունի: Իհարկե, Անդորրայի հավաքականի հետ խաղում մեզ այնքան էլ չպետք է հուզի պաշտպանական օղակի հարցը, քանի որ սեփական հարկի տակ էլ անդորրացիները որպես կանոն մեծ ուժերով են պաշտպանվում: Ավելի շատ պետք է անհանգստանալ հարձակման գծի խաղացողների գործողություններով: Հայտնի է, որ որակազրկման պատճառով Անդորրայի հավաքականի հետ հանդիպմանը չի մասնակցելու Յուրա Մովսիսյանը: Արագաշարժ, մշտապես դեպի մրցակցի դարպասը սուրացող այս ֆուտբոլիստի բացակայությունն իրոք կորուստ է հավաքականի համար: Լիտվայի հավաքականի հետ խաղը ցույց տվեց, թե առանց Մովսիսյանի ինչպիսին է մեր գրոհների արդյունավետությունը: Իսկ երբ 2-րդ խաղակեսում նա խաղադաշտ մտավ, անմիջապես աշխուժացրեց թիմի հարձակողական գործողությունները:

Անդորրայի հավաքականի հետ խաղում շատ կարեւոր կլինի նաեւ արագ գոլ խփելը: Դա կոգեւորի մեր ֆուտբոլիստներին, ինչպես պատահեց մրցակիցների երեւանյան մրցավեճում: Հուսանք, որ հյուրընկալվելիս էլ հաջողությունը կուղեկցի հայ ֆուտբոլիստներին:

# Մհեր Մկրտչյանին արժանին մատուցվեց

ՀԱՕԿ-ի լրատվության ծառայության տեղեկացմամբ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանը դրամական պարգեւներ է հանձնել վերջերս Մոսկվայում անցկացված հեծանվավազքի աշխարհի երիտասարդական առաջնության փոխչեմպիոն Մհեր Մկրտչյանին ու նրա մարզիչներ Համբարձում Պետրոսյանին եւ Արմեն Գյոզալյանին, ինչպես նաեւ հավաքականի գլխավոր մարզիչ Ալբերտ Սողոյանին: Հանդիսությանը ներկա են գտնվել նաեւ ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը եւ հեծանվային սպորտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Ալեքսանդր Բերեզովսկին:

Շնորհավորելով Մհեր Մկրտչյանին մեծ հաջողության առթիվ, Գագիկ Ծառուկյանը նշել է, որ իր համար մեծ անակնկալ էր երիտասարդ հեծանվորդի նվաճումը: Նա նաեւ ընդգծել է նպատակասլաց աշխատանքի կարեւորությունը, որը հաջողությունների հասնելու երաշխիքներից մեկն է: Սա պետք է օրինակ ծառայի մեզանում նույնիսկ հենակետային համարվող որոշ մարզաձեւերի ներկայացուցիչների համար: ՀԱՕԿ-ի նախագահը խոստացել է, որ այսուհետեւ ավելի մեծ կլինի հեծանվորդների նկատմամբ հոգատարությունը: Նա նաեւ հույս հայտնեց, որ Մհեր Մկրտչյանը Հայաստանի մարզական պատվիրակության կազմում իր ունակությունները կդրսեւորի հաջորդ տարի Լոնդոնում կայանալիք ամառային օլիմպիական խաղերում:

Հեծանվային սպորտի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ալբերտ Սողոյանը Մհեր Մկրտչյանի հաջողություններում կարեւորեց ՀԱՕԿ-ի եւ անձամբ Գագիկ Ծառուկյանի ներդրումն ուսումնամարզական հավաքների եւ արտագնա մրցումների կազմակերպման հարցում:

Հիշեցնենք, որ բոլորովին վերջերս Մոսկվայում կայացած հեծանվային սպորտի աշխարհի երիտասարդական առաջնությունում Մհեր Մկրտչյանը 2 արծաթե մեդալ էր նվաճել սկրեչ մրցաձեւում ու 25 կմ միջանկյալ վերջնագծով խմբային մրցավազքում:

Նորընծա աշխարհի կրկնակի փոխչեմպիոնը մարզվում է Համբարձում Պետրոսյանի եւ Արմեն Գյոզալյանի ղեկավարությամբ: 18-ամյա հեծանվորդը ավարտել է Երեւանի պետական օլիմպիական մարզական քոլեջը, ֆիզկուլտուրայի ինստիտուտի 2-րդ կուրսի ուսանող է: Նա մի շարք միջազգային մրցաշարերի հաղթող է: Հիշեցնենք նաեւ, որ նորանկախ Հայաստանի հեծանվային սպորտի պատմության մեջ Մհեր Մկրտչյանի նվաճումը եզակի է: Դա ավելի է արժեւորում պատանի հեծանվորդի մեծ հաջողությունը:

# Մովսիսյանն ու Պոլգարը հաշտություն կնքեցին

Խանտի Մանսիյսկում ընթացող շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում երեկ կայացան 2-րդ փուլի առաջին հանդիպումները: Հայաստանից պայքարը շարունակող Սերգեյ Մովսիսյանը սեւերով 32-րդ քայլին հաշտություն կնքեց Յուդիթ Պոլգարի հետ: Այսօր կկայանա մրցախաղի 2-րդ պարտիան: Եթե դա էլ ավարտվի ոչ-ոքի, ապա հաղթողը կորոշվի լրացուցիչ մրցախաղում:

Իվանչուկը հաղթեց Ալեքսեեւին, Հաշիմովը պարտության մատնեց Ազարովին, Ռաջաբովն առավելության հասավ Նեգիի նկատմամբ: Իրենց օգտին հաղթանակներ գրանցեցին նաեւ Յակովենկոն, Վիտյուգովը, Պառլիգրասը, Բրուզոնը, Դոմինգուեզը, Լե Քուանգը, Պոնկինը, Ֆիլիպովը, Մորոզեւիչը, Տոմաշեւսկին, Ժերեբուխը եւ Սուտովսկին:

# Ֆեդերերը կրկնեց Աղասու ռեկորդը

Դավիթ Նալբանդյանը հաջող է մեկնարկել Նյու Յորքում անցկացվող թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 22 մլն 63 հազար դոլար է: Ընթացիկ մրցաշրջանում «Մեծ սաղավարտի» շարքին դասվող 4-րդ մրցաշարի առաջին փուլում արգենտինահայ թենիսիստը բավականին դժվարին պայքարում, 4 խաղափուլում առավելության հասավ ամերիկացի Բոբի Ռեյնոլդսի նկատմամբ (3-6, 6-3, 6-4, 6-3): 2-րդ փուլում նրա մրցակիցը կլինի խորվաթ Իվան Լյուբիչիչը, որը պայքարից դուրս մղեց Սլովենիայի ներկայացուցիչ Բլաժ Կավչիչին:

Մրցաշարի առաջին փուլում նշանակալի իրադարձություն տեղի ունեցավ ԱՄՆ-ի բաց առաջնության հնգակի հաղթող Ռոջեր Ֆեդերերի մարզական կարիերայում: Կոլումբիացի Սանտյագո Հիրալդոյի նկատմամբ տոնած հաղթանակը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 224-րդն էր: Այս ցուցանիշով Ֆեդերերը հավասարվեց լեգենդար Անդրե Աղասուն: Իսկ ռեկորդային ցուցանիշը պատկանում է մեկ այլ լեգենդար թենիսիստ Ջիմի Կոնորսին, որը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 231 հաղթանակ է տոնել: Ինչ խոսք, Ֆեդերերը այդ ռեկորդն էլ կարող է գերազանցել հունվարին կայանալիք Ավստրալիայի բաց առաջնությունում:



Շվեյցարացի թենիսիստը կարող է մեկ այլ յուրօրինակ ռեկորդի հեղինակ դառնալ, եթե նրան հաջողվի նվաճել ԱՄՆ-ի բաց առաջնության չեմպիոնի տիտղոսը: Այդ դեպքում նա կդառնա աշխարհի միակ թենիսիստը, որը 9 տարի անընդմեջ հաղթող է ճանաչվել «Մեծ սաղավարտի» մրցանակի մրցաշարերից որեւէ մեկում:

Իսպանացի Ռաֆայել Նադալը ոչ առանց մեծ ջանքերի կարողացավ հաջորդ փուլի ուղեգիր նվաճել ղազախստանցի Անդրեյ Գոլուբեւի հետ մրցախաղում (6-3, 7-6, 7-5): Իսկ ահա Նովակ Ջոկովիչը կորտում ընդամենը 2 խաղափուլ անցկացրեց: Առաջինը շահելով 6-0 հաշվով, երկրորդում 5-1 հաշվի ժամանակ մրցակիցը հրաժարվեց պայքարից:

Ուժեղագույն թենիսիստներից 2-րդ փուլի ուղեգիր են նվաճել նաեւ Նիկոլայ Դավիդենկոն, Թոմաշ Բերդիխը, Խուան Կառլոս Ֆեռերոն, Ռադեկ Շտեպանեկը, Ֆեռնանդո Վերդասկոն, Դավիթ Ֆեռերը, Ջեյմս Բլեյքը:

Կանանց մրցաշարը սկսվեց խոշոր անակնկալով: Ուիմբլդոնի մրցաշարի այս տարվա չեմպիոնուհի, չեխ թենիսիստուհի Պետրա Կվիտովան չկարողացավ հաղթահարել ռումինուհի Ալեքսանդրա Դուլգերուի դիմադրությունը: Թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակում 49-րդ տեղում ընթացող Դուլգերուն ընդամենը 98 րոպեում պայքարից դուրս թողեց Ուիմբլդոնի մրցաշարի չեմպիոնուհուն (7-6, 6-3): Հիշեցնենք, որ Ուիմբլդոնում եզրափակիչում Կվիտովան հաղթել էր Մարիա Շարապովային: Վերջինս թեեւ հաջողությամբ հաղթահարեց առաջին փուլի արգելքը՝ պարտության մատնելով աշխարհի 104-րդ ռակետ, անգլիացի Հիտեր Ուոթսոնին (3-6, 7-5, 6-3), սակայն խաղի ընթացքում իր երկրպագուներին անհանգստանալու առիթներ տվեց: Մարզական իր կարիերայում Շարապովան «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 7-րդ անգամ առաջին փուլում հաղթեց 3 խաղափուլում: Նախորդ 6 դեպքերում նրան միայն մեկ անգամ է հաջողվել հաղթահարել քառորդ եզրափակիչի արգելքը: Դա 2007-ին էր, երբ Ավստրալիայի բաց առաջնությունում Շարապովան մտավ եզրափակիչ:

Դանիացի Կարոլին Վոզնյացկին ընդամենը 2 խաղափուլում վճռեց իսպանուհի Նուրիա Լյագոստերա-Վիվեսի հետ մրցակցության ելքը (6-3, 6-1): Նույնը հաջողվեց նաեւ Ուիլյամս քույրերին: Սերենան պարտության մատնեց սերբ Բոյանա Յովանովսկուն (6-1, 6-1), Վինուսն առավելության հասավ ռուսաստանցի Վեսնա Դոլոնցի նկատմամբ (6-4, 6-3):

Հաջորդ փուլի ուղեգիր նվաճած թենիսիստուհիների թվում են նաեւ Ելենա Բալտաչան, Սվետլանա Կուզնեցովան, Վիկտորիա Ազարենկոն, Աննա Իվանովիչը, Մարիա Կիրիլենկոն եւ Վերա Զվոնարյովան:

# Եվգենիա Դոլուխանովան հավակնում է գլխավոր մրցանակին

Սանկտ Պետերբուրգում ավարտին է մոտենում շախմատի աշխարհի նախկին չեմպիոնուհի Լյուդմիլա Ռուդենկոյի հուշամրցաշարը: Նախավերջին՝ 8-րդ տուրում Լիլիթ Գալոյանը սեւերով պարտության մատնեց ՖԻԴԵ-ի վարպետ Անաստասիա Տրավկինային ու վաստակելով 5 միավոր, ընթանում է 11-րդ տեղում:

Տուրը հաղթական էր նաեւ Ուկրաինան ներկայացնող Եվգենիա Դոլուխանովայի համար, որը սպիտակներով առավելության հասավ միջազգային վարպետ Մարինա Ռոմանկոյի նկատմամբ: Հայազգի 3-րդ շախմատիստուհին՝ Ալինա Բալայանն էլ հաջող խաղաց՝ պարտության մատնելով Լարիսա Բուտնեւային: Ալինան 4 միավորով 21-րդ տեղում է:

8-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր երկու առաջատարների՝ Սանդուգաչ Շայդուլինայի եւ Ալեքսանդրա Գորյաչկինայի մրցավեճը: Հաջողությունն ուղեկցեց Գորյաչկինային, որը 7 միավորով գլխավորեց աղյուսակը: Այդ հաղթանակը կարող է վճռորոշ լինել գլխավոր մրցանակի համար մղվող պայքարում: Ավարտական տուրում Գորյաչկինան սպիտակներով խաղալու է Եվգենիա Դոլուխանովայի հետ, որն ունի 6 միավոր: Նույնքան միավոր են վաստակել նաեւ Ռախիլ Էյդելսոնը, Օլգա Ստյաժկինան եւ Սանդուգաչ Շայդուլինան: Վերջինս խաղալու է Տատյանա Մոլչանովայի հետ: 1-ին տեղի համար պայքարում կարեւոր նշանակություն կունենա նաեւ Էյդելսոն-Ստյաժկինա պարտիան: Լիլիթ Գալոյանի մրցակցուհին կլինի Ելենա Տոմիլովան:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Համայնքային կալվածքների մասին հրամանագրի ոգեւորությունը վերածում է մտահոգության

### *Թերեւս գլխավոր խնդիրը 1936-ից հետո Ստամբուլի հայ, հրեա, հատկապես հույն բնակչության թվի կտրուկ նվազումն է*

Օգոստոսի 27-ին «Պաշտոնական» թերթում հրապարակվելով ուժի մեջ մտած համայնքային կալվածքների մասին Էրդողանի կառավարության հրամանագիրը մեծ ոգեւորություն էր առաջացրել ինչպես Լոզանի պայմանագրով Թուրքիայում ազգային փոքրամասնության կարգավիճակ ստացած հայերի, հույների եւ հրեաների, այնպես էլ ասորիների, քաղդեացիների եւ վրացիների շրջանում: Սակայն շուտով ոգեւորությունը վերածվեց մտահոգության: **«Ազգի»** նախորդ համարում դա պայմանավորել էինք հրամանագրի սահմանափակվածությամբ:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ հրամանագիրը ընդգրկում է ազգային փոքրամասնությունների այն կալվածքները, որոնք 1936-ին ունեցվածքի մասին հայտարարագրերով ներկայացված են հիմնադրամների գլխավոր վարչության, ինչպես նաեւ 1936-ից հետո համայնքներին կտակված կամ գնված այն կալվածքները, որոնք ազգային փոքրամասնությունների հիմնադրամներին անշարժ գույք ձեռք բերելու կամ կտակ ստանալու իրավունքից զրկելու պատճառով փոխանցվել են պետական գանձարան:

Ընդ որում, եթե անշարժ գույքը նշված լինելով հանդերձ 1936-ի հայտարարագրերում, պետականացվել կամ վաճառվել է, ապա ենթակա չէ վերադարձման, որքան էլ ներկայումս համարվի գանձարանի, հիմնադրամների գլխավոր վարչության, քաղաքապետարանի կամ նահանգապետարանի սեփականությունը:

Ակնհայտ է, որ 1936-ին հիմնադրամների գլխավոր վարչություն ներկայացրած հայտարարագրերում համայնքները ընդամենը նշել են Ստամբուլում եւ արվարձաններում գտնվող գույքը: Սա նշանակում է, որ համայնքային կալվածքների մասին հրամանագիրը չի տարածվում Թուրքիայի ողջ տարածքում սփռված կալվածքների վրա, առավել եւս եթե դրանք պատկանել են եկեղեցիներին, ինչպես նաեւ կրթական, մշակութային օջախների շենքերի եւ գերեզմանոցների վրա: Չմոռանալ, որ համայնքի կողքին եկեղեցին ինքն էլ եղել է կալվածատեր, ունենալով կողմնակի շինություններ եւ հողատարածքներ:

Հրամանագրում նշված չէ, թե պետականորեն առգրավված կալվածքները ինչպես են վերադարձվելու համայնքներին, կամ հետ ստանալու դեպքում ովքեր, ինչ հիմունքներով եւ ինչպես են կառավարելու, քանի որ գործող օրենքը արգելում է ոչ մահմեդականների ներհամայնքային հիմնադրամների (վաքըֆ) միավորումը: Բացի այդ, հայերի, հույների եւ հրեաների թիվը անցած տարիներին կտրուկ նվազել է: «Ռադիկալ» թերթը օգոստոսի 30-ի համարում «Համայնքային կալվածքների վերադարձման հանելուկը» վերնագրով վիճակագրական տվյալներ է բերում, ըստ որոնց 1936-ին Ստամբուլում բնակվել է 170 հազար հայ, 100-120 հազար հույն եւ 80 հազար հրեա, իսկ 2011-ին հայերն արդեն 65 հազար, հույները՝ 2500, իսկ հրեաները՝ 23 հազար են:

Համայնքային կալվածքների վերադարձման պարագայում դրանց հետագա կառավարման առումով լուրջ խնդիր է նաեւ ազգային փոքրամասնությունների թվի նվազումը: «Ռադիկալի» հարցին պատասխանելիս հենց այս խնդիրն է շեշտել հունական կալվածքների կառավարման հանձնաժողովի անդամ Անդոնիս Բերեզիանոսը, ասելով. «Չգիտենք, թե պետությունը ինչ պայմանով է վերադարձնելու համայնքային կալվածքները: 100 հազար բնակչություն ունեցող համայնքի ստեղծած համակարգը 2500 հոգով կառավարելը գրեթե անհնար է: Կալվածքները հետ ենք ստանում, սակայն կադրեր չունենք, որ դրանք կառավարեն: Կառավարումն ինքնին խնդիր է: Մեկ այլ, թերեւս ամենագլխավոր խնդիրն էլ այն է, որ մեզ չի թույլատրվում միավորել մեր հիմնադրամները: Կալվածքների մասին օրենքը այդ հնարավորությունը չի տալիս»:

Ի դեպ, Էրդողանի կառավարության հրամանագիրը չի տարածվում Կ. Պոլսո հույն հոգեւոր ճեմարանի, ինչպես նաեւ Մարդինի Մար Գաբրիել վանքի վրա, որը ուղղափառ ասորիների հոգեւոր կենտրոնն է: Թերեւս դա է պատճառը, որ Եվրոհանձնաժողովը, ողջունելով համայնքային կալվածքների մասին Էրդողանի կառավարության հրամանագիրը, հարկ է համարում ընդգծել դրա անկատար լինելը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

**ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ**

# Քննարկվել են «Հյուսիս-հարավ» ճանապարհի տրանշ-1 եւ տրանշ-2 հատվածների հարցերը

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար Մանուկ Վարդանյանը օգոստոսի 30-ին ընդունել է Ասիական զարգացման բանկի առաքելության ղեկավար, «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի պատասխանատու Արտո Ահոնենին եւ նույն ծրագրի վերլուծող Միլա Պանպոլինային:**

**Հանդիպման ընթացքում քննարկվել են Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող գյուղական ճանապարհների բարելավման ծրագրի ընթացքը, կատարված աշխատանքները, կարեւորվել այդ ճանապարհների պահպանման եւ շահագործման խնդիրները: Կողմերը մանրամասն անդրադարձել են նաեւ «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ տրանշ-1 եւ տրանշ-2 հատվածների վերակառուցման ֆինանսավորման, բնապահպանական, կազմակերպչական, անշարժ գույքի օտարմանն առնչվող մի շարք հարցերի: Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ Արտո Ահոնենին գոհունակություն է հայտնել վերոնշյալ ծրագրերի ընթացքի վերաբերյալ:**

**Ա. Մ.**

# Խուճապի են մատնվել

*1-ին էջից*

**Ամեն ինչ ունի պարզ բացատրություն. զորքերն այնտեղ են, որտեղ Ադրբեջանին պարտադրվել է զինադադարի համաձայնագիր: Ընդ որում, միջազգային իրավունքն Ադրբեջանին պարտադրում է հարգել «դեմարկացիոն եւ զինադադարի գծերը, որոնք արդյունք են նրա մասնակցությամբ ձեռք բերված համաձայնության»: Իսկ պաշտոնական Բաքուն խոսում է «պատերազմի վերսկսման իրավունքից», մի բան, որ միջազգային իրավունքում բացարձակապես գոյություն չունի: Եւ չի էլ կարող գոյություն ունենալ, որովհետեւ միջազգային իրավունքը ելնում է ոչ թե պատերազմի, այլ՝ խաղաղության կանխադրույթից: Այսինքն, նա ծառայում է խաղաղության եւ համագործակցության հաստատմանը, այլ ոչ թե պատերազմի եւ թշնամանքի հրահրմանը, ինչպես «մեկնաբանում են» Ադրբեջանում:**

**Բանակցային գործընթացում միշտ էլ վերջնական խաղաղության հասնելու հնարավորություն եղել է եւ կա: Բացակայում է դրան հասնելու Ադրբեջանի ցանկությունը: Ընդ որում, եթե Բաքուն այդպիսի ցանկություն դրսեւորեր, ապա, թերեւս մենք այսօր բոլորովին այլ իրավիճակ կունենայինք: Նաեւ՝ այն հարցերում, որ «առավելապես են հուզում ադրբեջանական կողմին»:**

**Այնպես որ, խաղաղություն պարտադրելու գաղափարը անցած փուլի ամփոփումն է եւ զգուշացում: Եվ Ադրբեջանում Սերժ Սարգսյանի դիպուկ, դիվանագիտորեն եւ քաղաքականապես անխոցելի ձեւակերպումը հենց որպես այդպիսին էլ հասկացել են: Այդ իսկ պատճառով մի ամբողջ գերատեսչություն՝ ի դեմս ԱԳՆ-ի, տրամաբանական որեւէ առարկություն անելու ընդունակություն չի ունեցել: Միայն կրկնել են տասնամյա եւ ավելի վաղեմության քարոզչական կաղապարը, որի տեղն, անկասկած, պատմական թանգարանն է:**


## ՀՀ ԱՄՆ դեսպանատունը մրցույթի է հրավիրում

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցութային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:





ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝31.8.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: